№ 109 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 20

1908

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 20 № 109

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱԶԱՏԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲԼԻ

Ամսական ՄԷԿ րուբլի

Ամերիկա տարեկան	.	6 դօլլար
Եւրոպա »	. .	30 ֆրանկ
Պարսկաստան »	.	10 րուբլի

Հինգշաբթի, մայիսի 22-ին
ՄՈՒՇՏԱՅԻԴԻ ԱՅԳՈՒՄ
կը կայանայ
ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ
Գիւղերում արհեստներ տարածող Թիֆլիսի Տնայնագործական Ընկերութեան օգտին
Վիճակախաղ-ալլեգրի, պլոտ-շըվօ, պետրուշկա, էշերի վրա հեծնել, կարուսել։
ԵՐԿՈՒ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ
ՍԻՆԵՄՕՏՕԳՐԱՖ տիկին Իվանիցկու
Վիճակախաղի իրերի մէջ կան բաւականաչափ արժէքաւոր իրեր, նաև 100 րուբ. պետական բոնա։
Զբօսանքի սկիզբն է ժամը 4-ին
Մուտքը մեծերի համար 30 կ., երեխաների և աշակերտների համար 15 կ.։
(ու.կ.ե.չ.հ.) առ. 4—3

ԼԷՕԻ ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ
սրանով խնդրում է այն բոլոր հիմնարկութիւններին և անձանց, որոնք ցանկութիւն ունեն պատգամաւորութիւններով, ուղերձներով կամ որևէ այլ ձևով մասնակցել Լէօի յոբելեանին, նեղութիւն կրել յայտնել այդ մասին յանձնաժողովիս նախագահ պ. Ա. Ահարոնեանին (Ներսիսեան դպրոց) մինչև ամսիս 21-ը։
Իսկ բոլոր նրանք, որոնք կը կամենան հանդիսատես լինել յոբելեանին, թող նեղութիւն կրեն կանխաւ տոմսակներ վերցնել Կ. հայոց բարեգործական ընկերութեան գրասենեակում պ. Լ. Բաբայեանի մօտ, առաւօտեան ժամը 10—2։
Տոմսակները 2 Ր Ի են։
Ինչ վերաբերում է նուիրատուութիւններին, յանձնաժողովս խնդրում է յանձնել դրանց գանձապահ-անդամ պ. Ալ. Մելիք-Ազարեանին։
Յօբելեանական հանդէսը նշանակված է հինգշաբթի, մայիսի 22-ին, առաւօտեան ժամը 12-ին, Արտիստական ընկ. թատրոնում։
Նախագահ յանձնաժողովի՝ Ա. Ահարոնեան
Քարտուղար՝ Յակ. Քոչարեան
առ. (15, 17, 20) 3—3

Նախազգուշացումն
Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ
ЗАВОДСКАЯ МАРКА
Д. З. Сараджевъ
ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ
Նորերս ի վաճառ է հանվել օղի (столовое вино)
„ԸՆԿ. Գ. Մ. ՍԱՐԱՋԵՎ" „Т-во Г. М. Сараджевъ"
ֆիրմայով և մերին կատարելապէս նման էտիկետներով, նպատակ ունենալով մոլորեցնել պ. պ. սպառողներին, մեր ֆիրմայի հռչակով օգտվելու նպատակով։
Թողնելով դատարանին ապրանքի տարածման այդպիսի մի ձևի գնահատութիւնը, գրասենեակը խնդրում է յարգելի հասարակութեան ուշադրութիւն դարձնել ֆիրմայի էտիկետների վրա անուան և հօրանուան սկզբնական „Դ. Զ." „Д. З." տառերին, նոյնպէս գործարանի դրօշմի՝ «այծեամը ժայռի վրա»։
(օ. մ.) առ. 25—21

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Երեքշաբթի, մայիսի 20-ին
ամառային շինութեան մէջ (Թայրեանի այգի) տեղի կունենայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
Սիմֆօնիքական խմբի առաջին համերգը Ն. Մ. Սոկօլսկի-Զիտրինսկու ղեկավարութեամբ։
Սկիզբն է երեկոյեան ժամը 9-ին։
Հիւրերը, պ.պ. անդամների երաշխաւորութեամբ, վճարում են 1 րուբլի։
(կ. ե.) առ. 2—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ
Մայիսի 20-ից կը վերսկսի հիւանդների ընդունելութիւնը կովկասեան հանքային Ջրերում։
Հասցէն՝ Էսսենտուկի, Верхняя Курсовая ул., дача Введенской.
(ե. հ. կ.) առ. 10—6

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

I

Հայկական դպրոցները վերադարձված են հայ ժողովրդին այն հիմունքներով, որոնք նախագծված էին 1874 թւի յուլիսի 19-ի կանօններով։

Ի՞նչ են ասում այդ կանօնները։

Նրանք արտօնում են, որ հայ հոգևորականութիւնը բանայ հանրակրթական եկեղեցական-ծխական դպրոցներ, ի լրումն այն իրաւունքների, որ վերապահված էին հայ հոգևորականութեան հոգևոր դպրոցներ բանալու համար համաձայն 1836 թ. պօլօժենիայի։

Պետութիւնը ճանաչելով հայ հոգևորականութեան ձեռնհասութիւնը դպրոցական ցանց կազմելու և դպրոցական կեանքը ղեկավարելու գործում, աւելացնում էր մի քանի անհրաժեշտ պայմաններ։

Այդ պայմաններից մէկը ասում է, որ այն դպրոցներում, որտեղ անցնում են ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, պէտք է պարտաւորիչ կերպով անցնեն նաև Ռուսաստանի պատմութիւնը և աշխարհագրութիւնը և այն էլ ռուսերէն լեզուով։

Համաձայն 1874 թւի կանօնների բացվեցին Անդրկովկասի զանազան տեղերում բազմաթիւ դպրոցներ, որոնք զարգանում և առաջ էին գնում իբրև ուժեղ կուլտուրական գործ, որը կը շարունակվէր և այժմ մի հոյակապ կուլտուրական կոթող կը լինէր, եթէ նրա գոյութիւնը չը վտանգվէր 1884 թւի տխրայիշատակ արհաւիրքից, երբ փակվեցին հայկական դըպրոցները։

Այժմ, երբ դպրոցները վերադարձված են 1874 թւի կանօնների հիմունքներով, անշուշտ հայ հասարակութիւնը ցանկանում է վերականգնած տեսնել դպրոցական այն եռուն և ճոխ կեանքը, որ գոյութիւն ունէր մինչև 1884 թւականը։

Հայ հասարակութիւնը նուիրել է դպրոցներին իր կուլտուրական ուժերի և իր բարեգործական զոհաբերութիւնների մեծագոյն մասը։

Նա բացել է դպրոցներ և նրանց զարգացրել ու ընդարձակել, որքան կարողացել է։ Նա դրաւել է դէպի այդ գործը ժողովրդի բոլոր խաւերը, յանձնելով ծխական հոգաբարձութիւններին դպրոցի տնտեսութեան և բարեկարգութեան գործը, ինտելիգենտ ուժերին նրա կրթական և մանկավարժական ղեկավարութիւնը։

Եւ հայկական դպրոցները եղել են ժողովրդական դպրոցներ, որոնց վերաբերութեամբ եկեղեցին և ծուխը հանդէս են եկել իբրև մի ներկայացուցչական մարմին պետութեան առաջ։

II

Ժողովրդի ամենախոշոր գործնական պահանջներից մէկը դպրոցների վերաբերութեամբ եղել է ուսուցչական կազմի ապահովութիւնը։

Որտեղի՞ց է հայ ժողովուրդը վերցրել ուսուցիչներ։

Հոգևոր դպրոցներից, Էջմիածնի ճեմարանից և մասամբ համալսարաններից ու պետական դպրոցների համար դասաւանդելու իրաւունք ձեռք բերած անձերից։

Մենք կարող ենք զանազան տեսակ պահանջներ ունենալ ուսուցչական պաշտօն ստանձնողներից և ցանկանալ, որ նրանք տարէ-տարի աւելի պատրաստված ու ձեռնհաս անձեր լինեն։ Դա գործի զարգացման տրամաբանութիւններից մէկն է։ Միևնոյն ժամանակ համեմատական մեթօդը և գործնական կեանքի ցուցմունքը գալիս են օգնելու դպրոցական հերթական խնդիրների լուծմանը, որոնք դրված են հասարակութեան առաջ։

Եւ ահա մեր դպրոցական կեանքի փորձերը, մեր իրականութեան պայմանները, մեր կրթական պահանջների առանձնայատկութիւնները և դպրոցական ցանցի ընդարձակման անհրաժեշտութիւնը պարզել են, որ ուսուցչական գործունէութեան համար հայկական դպրոցներում ամենախոշոր տարրը պէտք է մնան ճեմարանի և հոգևոր դպրոցների սաները։

Եւ անշուշտ դպրոցական կանօնադրութիւնը պէտք է ճանաչէ նրանց իրաւունքը ուսուցչական պաշտօնի համար։

Չը կայ ուրիշ ուսուցչական բազմաթիւ տարր, որը ունենար հայերէն լեզուի գիտութիւն և կարողանար պիտանի լինել հայկական դպրոցներում։

Մեր ներկայ ուսուցչութիւնը ունի և կարող է ունենալ թերութիւններ իր մանկավարժական պատրաստութեան մէջ և անշուշտ նա պէտք է աշխատէ վերացնել այդ թերութիւնները։ Դա կարևոր հարց է։ Բայց այդ հանգամանքը միայն լրացուցիչ նշանակութիւն ունեցող մի հանգամանք է։ Իսկ հիմնականը մնում է այն, որ ճեմարանի և հոգևոր դպրոցների սաները այն խոշոր տարրն են կազմում, որից կարող են հայկական դպրոցները լրացնել իրանց ուսուցչական կազմերը։

Ա. Քալանթար

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

III *)

Դիտելով պատմութեան, մենք տեսնում ենք, որ հայոց եկեղեցին իր գոյութեան ամբողջ ընթացքում—թէ այն ժամանակ, երբ հայերը ունէին քաղաքական անկախութիւն, կազմում էին պետութիւն, և թէ այն ժամանակ, երբ նրանք հեծում էին յոյների, պարսիկների, սելջուկների, մօնղօլների, օսմանցիների լծի տակ—հանդիսացել է այն միակ հաստատութիւնը, որտեղից հայ ժողովուրդը քաղում էր իր ոչ միայն զուտ կրօնական, հոգևոր, այլ և մտաւոր-բարոյական-լուսաւորական սնունդը, պէտքերը և պահանջները։ Դպրոց և գրականութիւն—ամեն մի ազգի զարգացման այս երկու հզօր լծակները—ամփոփված էին եկեղեցու մէջ, որի ղեկավարները հանդիսանում էին ազգընտիր կաթողիկոսը, ժողովրդընտիր առաջնորդները և երէցները և ինքը ժողովուրդը ի դէմս երէցփոխների և հոգաբարձուների։ Ժողովրդից ընտրված երէցփոխների հաստատութիւնը հայ եկեղեցու մէջ շատ հին և վաղեմի, դարերով նուիրագործված մի հաստատութիւն է։ Իսկ երէցփոխների ինստիտուտը ցոյց է տալիս ժողովրդի մասնակցութեան սկզբունքը բոլոր եկեղեցական գործերի մէջ։ Դպրոց և մատենադարան, գրքերի և ձեռագիրների հաւաքածու ամփոփված և կենտրօնացած էին վանքերում և եկեղեցիներում, և այն պետութիւնները, որոնց տիրապետութեան տակ ընկել էր Հայաստանը, այդ կողմից լիակատար ազատութիւն էին թողել հայոց եկեղեցուն։

Ուրեմն, հայոց եկեղեցին վաղուց, դեռ Ռուսաստանի տիրապետութիւնից առաջ, իր եկեղեցական-դպրոցական գործերում վայելում էր կրթական աւտօնօմիա, ինքնավարութեան իրաւունք, որպիսին չէ գլացել յատկացնել նրան և 1836 թւի պօլօժենիան, որովհետև, ճանաչելով կաթողիկոսի համար իրաւունք եկեղեցու գլխաւոր կառավարութեան, նա դրանով ճանաչում է և նրա կառավարութեան իրաւունքը բոլոր այն հաստատութիւնների վերաբերմամբ, որոնք սերտ և անբաժան կերպով կապված են եղել եկեղեցու հետ դարերի ընթացքում։

Թէ այդ այդպէս է, դրա ապացոյցն այն է, որ հայկական նահանգների (Երևանի, Նախիջևանի և Ղարաբաղի խանութիւնների) Ռուսաստանի ձեռքով նուաճումից ի վեր, կամ, աւելի ճիշտն ասած, պօլօժենիայի հրատարակութիւնից սկսած մինչև 1871 թիւը, ամենայն հայոց կաթողիկոսները և նրա ներկայացուցիչ թեմակալ առաջնորդները կատարեալ ներքին ինքնավարութեամբ վարել և կառավարել են հայ ժողովրդի դպրոցական գործը, մասնակցութեամբ ժողովրդի, և հայոց դպրոցների կառավարութեան այդ եղանակը ոչ մի բողոք և տրտունջ առաջ չէ բերել երկրի բարձր իշխանութեան կողմից։

Պօլօժենիայի հաստատութիւնից յետոյ ընտրված բոլոր կաթողիկոսները՝ Յովհաննէս, Ներսէս, Մատթէոս և Գէորգ շարունակ հաստատեցին դըպրոցներ, թեմական-հոգևոր, եկեղեցական-ծխական՝ երկսեռ, ստորին, հանրակրթական, սահմանեցին կանօնադրութիւններ այդ դպրոցների ներքին կառավարութեան, ուսման պլանի մասին, ժողովրդական ներկայացուցչութեան մասին, յանձին ընտրված հոգաբարձութիւնների և այդ բոլոր կարգադրութիւնների, իբրև արտայայտութիւն ներքին աւտօնօմիայի եկեղեցական-դպրոցական գործում նոյնպէս ոչ մի նկատողութիւն, բողոք և տրտունջ առաջ չեն բերել բարձր կառավարութեան կողմից։

Ինքնավարութեան սկզբունքը հայոց եկեղեցական-դպրոցական գործերում այնքան հանրածանօթ և յատկանիշ է հայոց եկեղեցու համար, որ Թիւրքիայում ևս, երբ ստեղծվեց «Ազգային Սահմանադրութիւն» կոչված հայոց ներքին կառավարութեան կանօնադրութիւնը, այդ սկզբունքը ամբողջովին գործադրված է։

Թէ, արդարև, հայոց կաթողիկոսների համար ճանաչված է եղել իրաւունք բանալ ամեն տեսակ հանրակրթական դպրոցներ, իբրև մի իրաւունք, անբաժան հայոց եկեղեցուց, այդ երևում է, ի միջի այլոց, և այն փաստից, որ Նոր-Նախիջևանի արհեստաւորաց դպրոց բանալու առիթով երբ Գէորգ կաթողիկոսը գրագրութիւն էր բացել ներքին գործերի մինիստրի հետ, վերջինս իր գրութեան մէջ այն միտքն է յայտնել, որ կաթողիկոսը իրաւունք ունի բանալ «ամեն տեսակի հանրակրթական դպրոցներ»։

Հայոց եկեղեցու վայելած այս ներքին ինքնավարութեան իրաւունքը շարունակվեց անընդհատ և անվիճելի, առանց որևէ հակառակութեան հանդիպելու, մինչև 1871 թիւը, երբ, ռուսաց կառավարութիւնը հրատարակելով մի նոր կանօնադրութիւն եկեղեցական-ծխական դպրոցների համար (ընդհանուր բոլոր դաւանութիւնների համար), ծագեց և այն հարցը, թէ արդեօք հայոց եկեղեցական-ծխական դըպրոցներն ևս պէտք է ենթարկվեն այդ կանօնադրութեան, թէ ոչ։

Հ. Ա.

---

*) Տես «Մշակ» № № 105, 106.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պօլիս, 17 մայիսի

Ռուսաց դեսպան Զինովիեվը, արձակուրդով մեկնելուց առաջ, երէկ ընդունվեց սուլթանից ունկնդրութեան։ («Հ. Գ.»)

Կ. Պօլիս, 17 մայիսի

Բ. Դուռը երկրորդ նօտան ուղարկեց, բողոքելով միջազգային զօրքերը Կրետէ կղզուց յետ կանչելու դէմ։ Մեծ վէզիրը գանգատվեց Զայիմիսի գործողութիւնների համար յունաց դեսպանին։ («Հ. Գ.»)

Կ. Պօլիս, 17 մայիսի

Սամոսի դէպքերի մասին առ այժմ ճշգրիտ տեղեկութիւններ չը կան, սակայն մինչև օրս ստացված՝ մասամբ մէկը միւսին հակասող լուրերի համաձայն, կղզում կոտորած չէ եղել։ 150 սպանվածների և վիրաւորվածների մասին հաղորդված տեղեկութիւնը չափազանցված է։

Աւստրո-ունգարական հիւպատոսը հաղորդում է, որ ինքը իր տան մէջ է պաշարված մնացել, իսկ երեխաները—դպրոցում։ Այսպիսի տեղեկութիւններ ստացվել են նաև միւս հիւպատոսներից, որոնք բոլորն էլ միաբերան օգնութիւն են խնդրում։

Սամօս մեկնեցին Սալօնիքի վալի Ռէուֆ-փաշան իբրև սուլթանի կօմիսար երկու ականանաւերի ուղեկցութեամբ, փոխ-ծովապետ Խալիլ-փաշան «Իզզէդին» զբօսանաւով։ Այստեղից մեկնեց «Աբդիւլ Համիդ» ականանաւը հակաականանաւերով։

Տեղական յունական շրջաններում մեծ յուզմունք է տիրում. պնդում են, թէ Բ. Դուռը վաղուց արդէն մտադրվում էր ոչնչացնել Սամոսի արտօնութիւնները և կղզին ենթարկել պատերազմական գրաւման։

Սկսվեցին ռուսաց, ֆրանսիական և անգլիական դեսպանների խորհրդակցութիւնները։

Բ. Դուռը դիպլօմատներից մի քանիսին յայտնեց, որ Սամոսի իշխանը տեղական զօրքերի հետ միասին դեռ ևս շրջապատված է ապստամբներից կառավարական շինութեան մէջ։

(«Հ. Գ.»)

Կ. Պօլիս, 17 մայիսի

Սամոսում, թիւրքաց տեղեկութիւնների համաձայն, արդէն երրորդ օրն է, որ լիակատար հանգստութիւն է տիրում։

Կղզին ուղարկված թիւրքաց նաւի հրամանատարը հաղորդում է, որ տեսընվել է Կօպասի գեներալ-նահանգապետի հետ, որ գտնվում է միջնաբերդում, որին պաշտպանում են թիւրքաց զինուորները: Ճուկանները և կրպակները բաց են:

Յունաց աղբիւրներից ստացված տեղեկութիւնների համաձայն, թիւրքական զօրքերը երբ Սամոսում ջարդ են կատարել, որի մասին կղզուց Քիօս փախած կանայք սարսափելի բաներ են պատմում:

Յունաց դեսպան Գրիպարիսը իր կառավարութեան անունից մայիսի 16-ից խնդրեց յանձնարար մեծ պետութիւնների դեսպաններին միջամտել թիւրքական նոր բռնութիւնների առաջն առնելու համար:

Առաջարկութիւններ են արված Բ. Դռան դեռ մայիսի 15-ին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կողմից: Մայիսի 16-ին ռուսաց և ֆրանսիական դեսպանները օգտվեցին սուլթանի մօտ ունեցած ունկնդրութիւնից և լիակատար համոզմունք յայտնեցին, որ Սամոսի անկարգութիւնները բնակիչների առիթ չէին տալ և կղզին անվնաս կը մնայ:

Արժանահաւատ աղբիւրներից հաղորդում են, որ անկարգութիւնները առաջ են եկել կուսակցական երկպառակութիւններից, որոնք սուր կերպարանք ստացան շնորհիւ փոքրամասնութեան կուսակցութեան աջակցութեան, որի ղեկավարն է թիւրքերի կողմնակից Խազիդակիս: Թիւրքաց զինուորները կրակ են բացել այն ժամանակ, երբ սամոսցիները կրակել են թիւրքաց զօրքերի վրայ, որի ժամանակ սպանվեց մի զինուոր: («Հ. Գ.»)

Կ. Պօլիս, 18 մայիսի

Թիւրքական լրագիրներում տպված են հետևեալ հեռագիրները, որ ստացվել են Սամոսից մայիսի 16-ին:

1) Գեն. Սադըկ-փաշան հեռագրեց, որ ապստամբները վերստին կրակ բացին, որ տևեց մինչև կէս գիշեր. նաւատորմիղը յետ մղեց նրանց իրանց դիրքերից և ցրեց: Իսմայիլ-Մախիր-փաշան վիրաւորվեց ոտքից կոմսարի հետ զրուցելիս: «Համիդիէ» ականանաւի վրայ, ապստամբները, որոնք կրակում էին Մախիր-փաշայի վրայ, հալածանքի ենթարկվեցին:

2) Ցամաք իջած զօրքերը ցրեցին ապստամբներին և ամենուրեք կարգը վերահաստատեցին. բոլոր զօրքերը մտան քաղաք: Կօմիսար Բէլուֆ-փաշան հաղորդում է, որ ինքը հասել է արդէն: Վալին աւելացնում է, որ կամեցաւ ցամաք ոտք դնել Սամոսի իշխանի հետ խօսելու համար և ցանկացաւ իշխանին նաւը կանչել, որովհետև քաղաքի ազգաբնակութեան մի մասը մասնակցում է ապստամբութեան. բայց որովհետև վտանգ կար իշխանին պալատից դուրս գալիս, նա վճռեց սկզբում զօրքը ցամաք իջեցնել և կենտրոնացնել նրան քաղաքի մի քանի կենտրոններում: Նա յոյս ունի, որ կարգ ու կանոնը կը վերականգնվի մի օրից յետոյ:

Փոխ-ծովակալ Խալիլ փաշան հեռագրում է, որ ապստամբները ցրված են և կարգ ու կանոնը վերականգնված է ամենուրեք: Նրա երկրորդ հեռագիրը հաղորդում է, որ զօրքերը մտան քաղաք: («Հ. Գ.»)

Կ. Պօլիս, 18 մայիսի

Սամոսի հարցում դեսպանները վճռեցին սպասողական քաղաքականութեան յարել: Որովհետև Սամոս է ուղարկված Բէլուֆ-փաշան ազգաբնակութիւնը խաղաղեցնելու համար, դեսպանները յոյս ունեն, որ Թիւրքիան, խաղաղեցնելով կղզին, անմիջապէս այնտեղից դուրս կը հանէ զօրքերը և յետ կը կանչէ ուղարկած նաւերը, չի խախտի Սամոսի օրգանական կանոնը: Ցաւեւնայն դէպս կանոնի խախտելու հարցը կարելի է յարուցել վերջում, իսկ առ այժմ դա վաղաժամ է: («Հ. Գ.»)

Աթէնք, 18 մայիսի

Հովանաւորող մեծ պետութիւնների հիւպատոսներին ուղարկված բողոքագրի մէջ Սամոսի կառավարութիւնը յայտնում է, որ Սամոսի դէպքերը վկայում են, թէ իշխան-նահանգապետի սարքած որոգայթներն են: Կառավարութիւնը խնդրում է անմիջապէս յետ կանչել նահանգապետին, հեռացնել զօրքերը պալատից և անմիջապէս պատերազմական նաւեր ուղարկել: («Հ. Գ.»)

Աթէնք, 18 մայիսի

Հաւաստի աղբիւրների վրայ յենվելով մատնանշում են, թէ անարգարացի է պնդել, որ երբ Սամոսի դէպքերը կապ ունեն պանհելլէնական շարժման հետ. խօսքը բացառապէս վերաբերում է բնակիչների և իշխանի միջև եղած երկպառակութիւններին, որ չը կամեցաւ թոյլ տալ ժողովրդական ժողով գումարել: Սամոսցիները եռանդով պնդում են, որ իրանք լոյալ են Թիւրքիայի վերաբերութեամբ: («Հ. Գ.»)

Բեռլին, 18 մայիսի

«Վէօլնիշէ Ցայտունգին» Կ. Պօլսից հեռագրում են, որ Յունաստանի ներկայացուցիչը դիմում է անում բոլոր դեսպաններին, խնդրելով ստիպել սուլթանին յետ կանչել Սամոս ուղարկված պատերազմական նաւերը և զօրքերը: («Հ. Գ.»)

Վիեննա, 18 մայիսի

Երէկ, մայիսի 17-ին, Հօֆբուրգում Աւստրօ-Ունգարիայի բարձրաստիճան զինուորականները տօնեցին Ֆրանց-Յօզէֆ կայսրի թագաւորութեան 60-ամեակը: Հանդիսին ներկայ էին Վիէննայում գտնվող բոլոր արքիդուքսները, զօրամասերի գեներալ-տեսուչները, զօրաբանակների հրամանատարները, մինիստրները, բազմաթիւ գեներալներ, ծովակալներ և ուրիշ շատ բարձրաստիճան պաշտօնեաներ:

Արքիդուքս Ֆրանց-Ֆէրդինանդը դիմեց կայսրին մի շնորհաւորական ճառով և զօրքի կողմից բաղդաւորութիւն ցանկացաւ միապետին:

Կայսրը պատասխանեց հակիրճ ճառով:

Այնուհետև արքիդուքսը կայսրին յանձնեց զինուորական արխիվի կազմած «Զօրքը վաթսուն տարում» մեծահատոր գիրքը: Դրանից յետոյ կայսրը ընդունեց զանազան գնդերի պատգամաւորութիւններին:

Յետոյ տեղի ունեցաւ նախաճաշ, որին ներկայ էին կայսրը, արքիդուքսերը և մօտ 550 հիւրեր: («Հ. Գ.»)

Սէուլ, 17 մայիսի

Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, վերջին չորս շաբաթվայ ընթացքում ճապօնական զօրքերի և կորէացի ապստամբների միջև տեղի են ունեցել 53 ընդհարումներ: Կորէացիները կորցրել են 549 մարդ, ճապօնացիները—30: Մեծ թափով ապստամբութիւնը երևան է գալիս Խամգիօնդօ և Կանուօնդօ նահանգներում: («Հ. Գ.»)

Պետերբուրգ, 18 մայիսի

Երկրորդ Պետական Դումայի սոց.-դեմոկրատ անդամներ՝ Զահրաբեանի, Ժեգենևի և Կոմարովի գործը կը քննվի աշնանը: («Кав.»)

Պարիզ, 17 մայիսի

Երէկ նախագահ Ֆալիէրը վերադարձաւ Անգլիա կատարած ճանապարհորդութիւնից: («Հ. Գ.»)

Դումայի կուլուարներում խօսում են, որ պատգամաւոր Կօլիւբակինին ներումն շնորհելու համար յարուցված խնդիրը կը մերժվի: Մերժման շարժառիթը համարում են այն, որ ինքը Կօլիւբակինը համապատասխան դիմումն չի արել:

Ներումն շնորհելու համար խնդիրքը ներկայացրել են 15 հոկտեմբերեաններ, ֆօն-Անրեպի ղեկավարութեամբ:

Կօլիւբակինը ասել է ժուրնալիստներին. «Ես անձամբ ոչինչ չեմ անի, որովհետև իմ վիճակը գտնվում է Դումայի ձեռքում: Ես հանգիստ կերպով կը գնամ բանտ, եթէ Դուման այդպէս կը վճռէ»:

Պետերբուրգում հիմնվում է մի ընկերութիւն, որի նպատակն է մաքառել անձնասպանութիւնների դէմ:

Արտաքին գործերի մինիստրութեան մէջ ռուս-պարսկական անցքերի մասին տեղեկութիւններ հաւաքելու եկած թղթակիցներին հաղորդել են, որ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև քաղաքական յարաբերութիւնների խզումը համարվում է հաւանական: Ռուսաստանը ոչ մի զիջումն անելու մտադիր չէ:

Զամբլօվսկին բացատրել է, թէ ինչու աջակողմեաններ յետ են վերցրել Կովկասի գործերի մասին արված հարցապնդումը ներկայ սեսսիայում:

Շարժառիթը համարվում է այն, որ մօտ ժամանակներս կովկասեան բարձր վարչութեան կազմի մէջ փոփոխութիւններ են տեղի ունենալու:

Հոկտեմբերեանները, ընդհակառակը, հարցապնդումը յետաձգելու պատճառը համարում են այն, որ աջակողմեանները կոմպետենտ աղբիւրներից արդէն տեղեկութիւն են ստացել, որ իրանց հարցապնդումներով նրանց այնուամենայնիւ չի աջողվի հեռացնել տալ Փոխարքային: («Кс.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՆՍԱՐԿՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ

Ամբողջ քսան օր է, որ «Մշակի» հակառակորդները Թիֆլիսում, ոտք-ձեռք ընկած, ամեն տեսակ սուտ միջոցների են դիմում շահագործելու իրանց օգտին և ի վնաս «Մշակի» խմբագրի այն դէպքերը, որոնք տեղի ունեցան դպրոցական կանոնադրութիւն մշակող պաշտօնական յանձնաժողովի շուրջը:

Նրանց հարկաւոր չէին ճշմարտութիւն, բարեխղճութիւն և իսկական գործ:

Նրանք ծարաւ էին խնտրիգների և բանսարկութեան: Նրանք հնարամտում էին մասնաւորներ և մշուշներ ստեղծելու իրանց անձնական սուտ նկատումները առաջ տանելու համար:

Եւ խառնած շարքերով ու անօրինակ եռանդով հանդէս էին եկել մի սկանդալ սարքելու:

Զրպարտութեան և բանսարկութեան սլաքները ուղղված էին իմ դէմ, իբրև յանձնաժողովի անդամի դէմ:

Ամեն օր նորանոր առասպելներ էին հնարվում և կեղծ ու պատիր լուրեր նետվում փողոցները:

Եւ կային մարդիկ, որոնք մոլորված էին խնտրիգանների շահատակութիւններից:

Ես համբերում էի:

Առաջին անգամը չէր, որ մեր հակառակորդները սուտ ու անարժան կերպով արշաւանքներ էին սկսում մեր դէմ, արշաւանքներ, որոնք փշրվում էին իրանց կատարեալ պարտութեամբ և մեր կատարեալ բարոյական յաղթանակով:

Այժմ էլ նոյնն է:

Այժմ էլ, անշուշտ, մենք բարոյական յաղթանակ կը տանենք, ինչպէս այդ յաճախ տարել ենք անցեալում:

Դպրոցական կանոնադրութեան յանձնաժողովում իմ ունեցած գործունէութիւնը գրված է հրապարակի վրայ և նրա քննութիւնը պատկանում է հասարակութեան:

Այդ գործունէութիւնը կատարվել է ամենաբացայայտ և ամենաազնիւ կերպով: Եւ ես կանգնած այսօր հայ հասարակութեան առաջ՝ համարձակ կերպով յայտնում եմ, որ ես արել եմ գործի համար այն ամենը, ինչ որ կարելի էր անել:

Եւ հաւատացած էլ եմ ամենախորին կերպով, որ հասարակական ազնիւ և մաքուր խղճմտանքը անարգանքի կը մատնէ բանսարկուների խարդաւանքը, որով բարոյապէս գնահատած կը լինի իմ ջանքերը յօգուտ մի թանգագին ժողովրդական գործի, որի համար ես չեմ խնայել իմ ժամանակը և աշխատանքը:

Ասածներիցս յետոյ դնում եմ հասարակութեան առաջ «Վտակ» թերթի վերջին № 106-ից մի կտոր, որտեղ ասված է հետևեալը.

Հայ դպրոցների նոր կանոնադրութեան քննութեան խնդրում—մեր առաջնորդողը այդ իսկ խնդրի մասին է—պ. Քալանթարը ցոյց տուեց չինովնիկական հոգեբանութեան և սերվիլիզմի բոլոր առանձնայատկութիւնները:

Այդ՝ ինչպէս պ. Քալանթարին՝ իրեն, նոյնպէս և գործին ծանօթ շատ անձնաւորութիւններին, և միայն մեզ է յայտնի:

Կարծում ենք, որ «Մշակը» չի ստիպի մեզ այդ առթիւ աւելի դառն ճշմարտութիւններ հրապարակ հանել:

Ահա ինչպէս է մեր հակառակորդների սպառնալիքը:

Բայց ահա և մեր պատասխանը:

Եղէք պարզախօս և մի թագցնէք ոչ մի բան, որքան էլ դառն լինի նա: Յայտնեցէք հասարակութեան այն ամենը, ինչ որ ձեզ յայտնի է:

Ես ոչ մի բանից թաքնվելու կարիք չունեմ: Եւ ընդհակառակը լաւ գիտեմ, որ սուտ գիտումներով սկսված այդ արշաւանքը դարձեալ մի նոր բարոյական խոշոր յաղթանակ կը լինի իմ համար և միևնոյն ժամանակ բարոյական սնանկութեան մի նոր վկայական իմ հակառակորդների համար:

Համեցէք ասպարէզ:

Գոնէ կիմանանք, որ մեծ անկիւնների սալ-կօսէների թեկնածուները ինչպիսի առասպելներ հնարելու են ընդունակ:

Դպրոցական յանձնաժողովում իմ իւրաքանչիւր քայլը մինչև կաթողիկոսական պատգամաւորների հեռանալը եղել է նրանց գիտութեամբ և միևնոյն ժամանակ նաև ընդհանուր խորհրդակցութեամբ հրաւիրված անձնաւորութիւնների հետ:

Իմ կազմած ծրագիրը, իմ բոլոր դիրքը եղել են արդիւնք նախնական խորհրդակցութեան և պայմանաւորութիւնների:

Եւ եթէ հարկաւոր են մանրամասնութիւններ և անուններ՝ պատրաստ եմ բոլորը դնելու հասարակութեան առաջ:

Այո, համարձակ կարող եմ ասել, որ դպրոցական գործի համար ես լուրջ և անձնուէր աշխատել եմ:

Եւ եթէ գիտենայի թէ աւելի լաւ գործունէութեան ճանապարհներ ու հնարաւորութիւններ կան, կանէի:

Մեր խորհրդակցութիւնները այդպիսի ճանապարհներ և հնարաւորութիւններ չէին մշակել:

Մեր դէմ խնտրիգնող լարողները և սուտ գիտումներ առաջ տանողները կարող են կեղծ ու սուտ լուրերով ողողել փողոցը, բայց այդ բոլորը իբրև զրպարտութեան արգասիք օդը կը ցնդէ, և հասարակութիւնը հանդիսատես կը լինի մեր շիտակութեան և բարեխղճութեան մի նոր ապացոյցի, որը և մեր բարոյական յաղթանակն է:

Ա. Քալանթար

ԾԽԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կաթողիկոսական ընտրութեան ծխական պատուիրակներ են ընտրվել մայիսի 18-ին Թիֆլիսի հետևեալ եկեղեցիներում.

1) Մողնի եկեղեցի—պ. պ. Հ. Առաքելեան, Պետրոս Քալանթարեան և Ռ. Յովհաննիսեան. 2) Ջգրաշէնի եկեղեցի—պ. պ. բժ. Կ. Ստեփանեան, Աւետիք Ահարոնեան և Յ. Խունունց. 3) Քամոյենց եկեղեցի—պ. պ. Ալ. Մելիք-Ազարեանց, Յ. Սպենդիարեան և Ս. Զաւարեան. 4) Մէյդանի ս. Գէորգ եկեղեցի—պ. պ. Գէորգ Բաշինջաղեան, Գ. Միրզաեան և Յ. Ամիրխանեան. 4) Զաւղուէթի Աստուածածին—պ. պ. Սարգիս Եսայեան, Գրիգորեան և Յ. Դանիէլեան. 6) Թանդոյեանց եկեղեցի—պ.պ. Դարչօ Առաքելեան, Անդրէաս Յովհաննիսեան և Խաչատուր Տէր-Մարգարեան. 7) Վերայի ս. Խաչ եկեղեցի—պ.պ. Մակար Ջմշկեան, Խաչատուր Խանդիլեան, Խաչատուր Միքթարեան և անձնափոխանորդ՝ Կ. Ղազարեան. 8) Կարմիր-Աւետարան Շամքոռեցոց եկեղեցի—պ.պ. Իսահակ Յարութիւնեան, Նիկողայոս Նարիմանեան և Հ. Տէր-Յովհաննիսեան. 9) Ս. Կարապետի եկեղեցի—Արտաշէս Տէրտէրեան, Կարապետ Քոչարեան, Բ. Յարութիւնեան. 10) Բեթղեհէմի եկեղեցի—պ.պ. բժշկ. Բագրատ Նաւասարդեան, Վասիլ Աւանեան, Րոստոմ Մարտիրոսեան. 11) Նորաշէնի եկեղեցի—պ.պ. Ալէքսանդր Բէջմիշեան, Լևոն Եւանգուլեան, Արշակ Բարխուդարեան. Էջմիածնեցոց եկեղեցի—պ.պ. Գրիգոր Նախշունեան, Յովհաննէս Նիկողայոսեան և Սողոմոն Մելիք-Փարսադանեան. 12) Ս. Մինաս եկեղեցի—պ.պ. բժշկ. Իգիթեան, Գէորգ Տէր-Դաւթեան և Գրիգոր Ղազարեան:

ՄՈՂՆՈՒ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Կիրակի, մայիսի 18-ին, ժամը 12-ին կայացաւ Մողնու ս. Գէորգ եկեղեցու ծխականների երկրորդ և վերջնական ժողովը, որին մասնակցում էին 51 ծխականներ: Աւագ քահանայ տ. Սիմէօն Ջմշկեան, բանալով ժողովը, յայտարարեց, որ, համաձայն սինօդի հրամանի, պէտք է ընտրել 3 պատուիրակներ՝ կաթողիկոսական պատգամաւորի ընտրութեան համար, և առաջարկեց ընտրել նախագահ և քարտուղար:

Ընդհանուր ժողովը միաձայն նախագահ ընտրեց Հ. Առաքելեանին և քարտուղար՝ Ռուբէն Մելիք-Ադամեանին:

Հ. Առաքելեան արտասանեց հետևեալ ճառը.

«Այսօր մենք, ծխականներս, կոչված ենք ընտրելու 3 պատուիրակներ, որոնք յետոյ թեմի միւս եկեղեցիների պատուիրակների հետ պէտք է ընտրեն Թիֆլիսի ամբողջ թեմի հայ ազգաբնակութեան կողմից մի պատգամաւոր՝ մասնակցելու համազգային ընտրողական ժողովին, որ պէտք է գումարվի հոկտեմբերի 30-ին Էջմիածնում, ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութեան համար: Ուրեմն պատուիրակներից է կախված, թէ ինչ ուղղութեան և արժանաւորութեան պատգամաւոր կընտրվի, այնպիսի պատգամաւոր, որ, ըմբռնելով հայ ժողովրդի և եկեղեցու իսկական շահերը, իր քուէն տայ այն անձին, որը իսկապէս կարողանայ լըցնել ազգի բաղձանքը և արժանաւոր յաջորդ լինել Լուսաւորչի աթոռի և պետ հայոց ժողովրդական եկեղեցու: Ուստի, մենք պարտաւոր ենք, անկասկած, ընտրել այնպիսի պատուիրակներ, որոնք իրանց համոզմունքով, աշխարհահայեացքով անպայման կողմնակից են կաթողիկոսական ընտրութեան, ճանաչում են հայոց եկեղեցին, իբրև մէկը այն փակտորներից, որոնք կոչված են առաջ մղելու հայ ժողովրդի մտաւոր-բարոյական-հոգևոր զարգացումը»:

Դրանից յետոյ ժողովը բաց քուէարկութեամբ անուանեց մի քանի թեկնածուներ, որոնցից գաղտնի քուէարկութեամբ և ճնշող մեծամասնութեամբ պատուիրակներ ընտրվեցին հետևեալ երեք անձինք—պ. պ. Հ. Առաքելեան, Ռուբէն Յովհաննիսեան և Պետրոս Քալանթարեան:

Ընտրական ժողովը փակելով, նախագահ Հ. Առաքելեան յայտարարեց, որ պէտք է կայանայ ծխական ժողովը, ծխական հոգաբարձութեան հրաւէրով, քննելու մի քանի կարևոր հարցեր, որոնց մէջ Գայիանեան դպրոցին վերաբերեալները, այն է 1) քննելու և հաստատելու հոգաբարձութեան 1906—07 թ. հաշիւը և լսելու նրա տեղեկագիրը դպրոցի այժմեան ֆինանսական դրութեան մասին, 2) միջոցներ որոնելու՝ գտնելու դպրոցի պահպանութեան համար եկամտի հաստատուն և ապահով աղբիւրներ, 3) ընտրելու նոր ծխական հոգաբարձութիւն, որովհետև ներկայ հոգաբարձութեան պաշտօնավարութեան շրջանը վերջանում է առաջիկայ սեպտեմբերին, 4) ընտրելու վերստուգիչ յանձնաժողով և 5) որոշելու Գայիանեան դպրոցի նախկին շինութեան վերաշինութեան հարցը:

Յայտարարելով այս օրակարգը, Առաքելեան խնդրեց նոր նախագահ ընտրել, քանի որ ինքն, իբրև ծխական հոգաբարձութեան նախագահ, պէտք է ներկայացնէ ժողովին հոգաբարձութեան գործունէութեան հաշիւը և տեղեկագիրը:

Ժողովը նախագահ ընտրեց պ. Ռ. Յովհաննիսեանին, բայց սա հրաժարվելով, ընտրվեց պ. Ս. Լիսիցեան:

Հոգաբարձութեան զեկուցումից երևաց, որ 1906 թ. սեպտեմբերի 16-ին հոգաբարձութիւնը ստացել է դիրեկցիայից Գայիանեան դպրոցին պատկանող գումարը 20,464 ր. իբրև անձեռնմխելի դրամագլուխ, առանց սակայն որևէ ապացոյցի, թէ այդ գումարը անձեռնմխելի է: Տարվայ ընթացքում մուտք ունեցել է 5771 ր. (տոկոսիք դրամագլխի, աշակերտութիւններից ուսման վարձ, նուէրներ և այլն), իսկ ծախք—8973 ր. (ուսուցչական խումբ, բնակարան և այլն). այնպէս որ դեֆիցիտ եղել է 3202 ր., որպիսին հոգաբարձութիւնը ծածկել է, պարտք անելով մուրհակով Թիֆլիսի առևտրական բանկից, արժէթղթերի գրաւականով:

Ապա զեկուցվեց 1907—1908 թ. հաշիւը, որից երևաց, որ հոգաբարձութիւնը այս տարի ևս ունենալու է դեֆիցիտ, այնպէս որ մինչև առաջիկայ սեպտեմբեր ամիսը դեֆիցիտ նախատեսվում է մօտ 7000 ր., որովհետև այն յոյսերը, որ ծխական ժողովը և հոգաբարձութիւնը դրել էին ծխական տուրքերի վրայ, որոնցից եկամուտ սպասվում էր երկու տարվայ ընթացքում 6000 րուբլի, չիրականացան, որովհետև ծխական տուրք ստացվեց միայն այդ 2 տարվայ ընթացքում 500 ր.:

Այս զեկուցումները առաջ բերին վիճաբանութիւններ, և ի վերջոյ ժողովը որոշեց շարունակել իր պարապմունքը յաջորդ կիրակի:

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ, մայիսի 17-ին, երեկոյեան ժամը 7 և կէսին, Թիֆլիսի բօրսայի դահլիճում բացվեց Կ. Հ. Բ. ընկ. ընդհանուր ժողովը, որ շարունակութիւնն էր նախորդ, չորեքշաբթի օրվայ, ժողովի:

Նախագահի տեղը գրաւում է բժշկ. Նաւասարդեան:

I. Խորհրդի նախագահ Ս. Յարութիւնեան կարդաց ընկերութեան ճիւղերի 1908 թ. նախահաշիւները.

1) Ախալքալաք—մուտք 360 ր., ելք նոյնքան:
2) Արդահան—մ. 275 ր., ե. 275 ր.: Այստեղ չէ հաշւած 5%-ը:
3) Ախալցխա—մ. 1090 ր., ե. 415 ր.:
4) Բաթում—մ. 2250 ր., ե. 2250 ր.:
5) Կարս—մ. 900 ր., ե. 900 ր.:
6) Քարվանսարա գ.—մ. 200 ր., ե. 200 ր.:
7) Արմաւիր—մ. 2000 ր., ե. 2000 ր.:
8) Շուշի—մ. 840 ր., ե. 840 ր.: Այստեղ նոյնպէս պէտք է դուրս գալ 5%-ը:
9) Լագօդեխ—մ. 230 ր., ե. 200 ր.:
10) Քութայիս—մ. 525 ր., ե. 450 ր.:
11) Երևան—մ. 4600 ր., ե. 4600 ր.:

Ընդհանուր ժողովը բոլորը հաստատեց, բացի Քութայիսի և Երևանի նախահաշիւներից, որոնց հաստատեց հետևեալ փոփոխութիւններով.

ա) Քութ. 5% պահեստի և անձեռնմխելի գումարի համար դուրս գալ (26 ր. 25 կ.) և ծախքի մէջ ցոյց տալ. հանել աւելացած 75 րուբլուց, իսկ սրա մնացորդը աւելացնել չքաւոր աշ.-աշակերտուհիների գումարի վրայ:

բ.) Երևանի ճիւղը փակվելուց յետոյ, ուղարկված է 2800 ր., սակայն այդ 2800 ր. այժմ վերածված է 4%-ային րենտաների, որոնց արժէքը բօրսային գներով կանէ մօտ 2300 ր.: Բացի սրանից ցանկութիւն է յայտնվում, որ այս գումարի միայն տոկոսները ծախսվեն:

Լագօդեխի ճիւղը խնդրում է խորհրդին միջնորդել Թիֆլիսի նահանգապետի առաջ, որպէսզի Լագօդեխում բացվի ժողովրդական գրադարան-ընթերցարան բարեգ. ընկ. իրաւասութեան ներքոյ:

Ընդհանուր ժողովը որոշեց՝ լիազօրութիւն տալ տեղական ճիւղերին ծախսեր անել տեղական ժողովներից հաստատված նախահաշւով, մինչև ընդհանուր ժողովից հաստատվելը:

II Բուդաղեանի նուիրած 10,000 ր. գործադրութեան նպատակը:

Այս գումարի վերաբերութեամբ գործադրութեան ոչ մի նպատակ չէ ցոյց տրված կտակում. կտակողը սոսկ ասում է. «Պարտաւորեցնում եմ կտակակատարիս տաս հազար րուբլի արծաթ վճարել Թիֆլիսի հ. բ. ընկերութեան»: Այժմ ընդհանուր ժողովին է մնում որոշել գումարի աւելի նպատակայարմար կերպով գործադրելու խնդիրը:

Ընդհանուր ժողովը ընդունեց խորհրդի որոշումը.—Բուդաղեանի կտակած դրամը համարել պահեստի գումար. իսկ %-ը այս տարի յատկացնել դպրոցական գործին: Հասկանալի է, որ գումարը, իբրև պահեստի, կարելի է գործադրել ապագայում ամեն անգամ բացառիկ աղէտի կամ գործի համար:

Դրանից յետոյ կարդացվեցին երկու զեկուցումներ՝ գրադարան - ընթերցարանի և դպրոցական գործի մասին, որոնք առիթ տուին երկար վիճաբանութիւնների և որոնց վերաբերմամբ մենք պարտաւոր ենք համառօտ մի քանի խօսք ասել:

Այդ զեկուցումները ցոյց տուին, որ ներկայ խորհուրդը կամ գոնէ նրա անդամների մի մասը հետևում է մի որոշ տակտիկայի, որ անհամապատասխան է թէ ընկերութեան շահերի արժանապատւութեան և թէ իրականութեան: Նկատվում է մի որոշ տենդենցիա՝ մոռացութեան կամ անգիտութեան տալ այն ամենը, ինչ որ նախկին կովկասեան հայոց բարեգ. ընկերութեան օրով կատարվել է և ներկայ գործունէութիւնը փոքրանել ուսուցիչ և խրախուսութեան չը համապատասխանող զեկուցումներով: Այդ ձգտումը շատ պարզ երևաց վերոյիշեալ երկու զեկուցումներից:

Խորհուրդը զեկուցանում է, թէ նա որոշել է բանալ Թիֆլիսում կենտրոնական գրադարան-ընթերցարան և այդ առիթով կայացրել է խորհրդակցութիւններ, հրաւիրել է գործին որպէս թէ հմուտ և ծանօթ անձանց, կազմել է յատուկ մասնաժողով, որը մի քանի նիստեր կայացնելուց յետոյ, մշակել է որոշ ծրագիր, որի համաձայն գրադարան-ընթերցարանը պէտք է ամփոփի իր մէջ 1) հայատառ ինքնուրոյն և թարգմանական բոլոր գրքերի ժողովածուն, 2) հայագիտութեան վերաբերեալ օտար լեզուներով լոյս տեսած բոլոր հրատարակութիւնները և 3) կովկասագիտութեան վերաբերեալ այն բոլոր գրուածքները, որոնք մօտիկ առնչութիւն ունեն հայ կեանքի հետ: Գրադարան-ընթերցարանը գլուխ բերելու համար խորհրդից տրվում է 2000 րուբլի:

(Կը շարունակվի)

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԼՈՒԲՈՒՄ

Ինչպէս յայտնի է, Հասարակական կլուբը (Միքայէլեան փողոց) իւրաքանչիւր շաբաթ օր իր անդամների ու հիւրերի համար տալիս է բաւականին հետաքրքրական բովանդակութեամբ գրական-երաժշտական երեկոյթներ, ռեֆերատներ, ներկայացումներ և այլն:

Մայիսի 17-ի երեկոյթը գրաւել էր մեծ թւով երկսեռ ինտելիգենտ բազմութիւն, այնպէս որ, դահլիճի փոքրութեան պատճառով, շատերը ստիպված էին կանգնած մնալ:

Ժամը 9-ին սկսվեց երեկոյթը Չեխովի «Трагикъ по неволѣ» վօդեվիլով, մասնակցութեամբ Ագուրովի և Ջ. Ա. Սլավինսկու: Ագուրովի գեղեցիկ ու տիպիկ խաղը ընդհանուր բաւականութիւն պատճառեց հանդիսականներին և մի քանի անգամ բուռն ծափահարութիւնների արժանացաւ:

Երկրորդ բաժինը կատարեց օր. Ի. Բաքանթար, անգիր արտասանելով Նադսոնի «Փօէտը»: Վշտի և թախծոտ սիրոյ վառուած երգիչը՝ իր վառ երևակայութեամբ, անխիղճ դէմքով ու ջերմ հաւատով դէպի գեղեցիկի և վեհի ու ճշմարտի յաղթանակը, օրիորդի ոգևորութեամբ ու գեղեցիկ ինտոնացիայով արտասանված գողտրիկ տողերի մէջ, կարծես, մարմնացաւ մի րոպէ:

Ջերմ ծափահարութիւնների տակ օրիորդը նորից բեմ դուրս եկաւ և արտասանեց Ագա-Նեգրիից մի փոքրիկ ոտանաւոր:

Երեկոյթի երրորդ բաժինը ամբողջովին նուիրված էր Վեդեկինդի «Пробужденіе весны» պիէսային, որ վերջին ժամանակներս աղմկալի աջողութիւն ունեցաւ և արգելվեց:

Ռեֆերենտը, Պետերբուրգի գիմնազիայի ուսուցիչ Կ. Վ. Սիվկով, նախ և առաջ ծանօթացրեց հանդիսականներին՝ թէ ինչպիսի պայմաններում երևան եկաւ այդ պիէսան, որի մէջ գլխաւորապէս շօշափվում է սեռային հարցը: Պիէսան նոր չէ գրված, բայց նա անյայտ էր ոչ միայն Ռուսաստանում, այլ և իր հայրենիքում՝ Գերմանիայում: Մինչև այս մի քանի տարվայ ընթացքում նա յանկարծակի ունեցաւ աղմկայոյզ աջողութիւն: Աջողութեան պատճառը պիէսայի գեղարուեստական արժանաւորութեան մէջ չէ վերագրում դասախօսը, որովհետև դրամատիկական գեղարուեստական արժանաւորութիւն չունի նա իսկապէս, նրա մէջ չը կան տիպեր, այլ կան միայն սիլուետներ, կօնտուրներ և թոյլ է նա նաև բեմական յարմարութիւնների տեսակէտից. այլ այն բանին, որ իր բովանդակութեամբ նա համապատասխանում է ժամանակակից կեանքի պահանջներին: Այդ տեսակէտից նա յայտնի հասարակական դեր խաղաց և աւելի ևս մեծ դեր կը խաղար, եթէ որ չարգելվէր նրա ներկայացումը: Իր պիէսայի մէջ Վեդեկինդը ցոյց է տալիս, թէ ինչպիսի հետևանքի է հասցնում սեռային հարցի սխալ կարգաւորումը մեր կեանքում: Նա ստիպում է մեզ մտածել ժամանակակից հրատապ հարցերի մասին: Քաղաքական ռեակցիայի ներկայ շրջանում, հասարակական առողջ միտքը սկսում է շեղվել ուղիղ ճանապարհից, հանդէս են գալիս սուր բնազդները և անբարոյականութիւնը բուռն թափով աճում է մատաղ սերնդի մէջ: Հաստատված է, որ համալսարանական ուսանողութեան մօտ 60 %-ը վարակված է հիւանդութիւններով. ազատ սիրոյ լիգաները ապացոյց են դրան:

Ռեֆերենտը, վերլուծելով այդ պիէսը, նկատում է, որ Վեդեկինդը շօշափելով այդ հրատապ խնդիրները՝ այնուամենայնիւ դրական լուծում չէ տալիս նրանց: Նա դատապարտում է գիմնազիայի վարչութեան վերաբերմունքը, դաստիարակութեան սիստեմը, ուղղիչ տները, իբրև անբարոյականացնող: Այդպիսով «Пробужд. весны» պիէսան իսկապէս մեղադրական մի ակտ է կառավարութեան և դպրոցական վարչութեան դէմ:

Եթէ հեղինակը տալիս է որևէ պատասխան, այդ այն է, որ երեխաները սեռային վարքբերութեան գաղտնիքը պիտի իմանան ոչ թէ դպրոցում, այլ տանը՝ ծնողներից:

Ռեֆերենտը այն կարծիքն է յայտնում, որ անհրաժեշտ է ամենալուրջ և վճռական միջոցներ ձեռք առնել, որպէսզի այդ հարցը կանոնաւոր լուսաբանութիւն ստանայ երիտասարդութեան աչքում, կեանքի համապատասխան ռեժիմով պահպանելու երիտասարդութեան մարմնական ու բարոյական առողջութիւնը և, վերջապէս, ժամանակակից կեանքի պայմաններից հեռացնելու այն բոլորը, ինչ որ խանգարում է հասարակական բարոյականութիւնը և նպաստում է նրա քայքայմանը աւելի ևս լայն չափերով:

Բարքերի անկմանը աւելի են նպաստում, մանաւանդ, զանազան սինեմատօգրաֆներ, պարիզեան ժանրը, Նեվայի փարսը, որոնք ոչ մի օգուտ չեն տալիս նոյնիսկ մեծերին:

Ռեֆերենտը վերջում նկատեց, որ արժէր որպէսզի մեծերը ոչ միայն տեսնէին այդ պիէսայի ներկայացումը, այլև կարդային:

Վերջում Ա. Բալանթարի ղեկավարութեամբ տեղի ունեցան հետաքրքրական դեբատներ, որտեղ առաջարկվեցին զանազան բացասական և դրական միջոցներ հասարակական ժամանակակից այլասերման այդ համաճարակ հիւանդութեան դէմ մաքառելու համար:

Երեկոյթը վերջացաւ ժամը 11-ին:

Հանդիսականները ցրվեցին գոհ սրտով:

Յաջորդ անգամ Երմօլաևը կը կարդայ մի ռեֆերատ «Մ. Գորկու» մասին:

Լ. Դ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Ամսիս վերջերում տեղի է ունենալու ժողովրդական համալսարանների Թիֆլիսի ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը և վարչութեան նոր անդամների ընտրութիւնը: Անցեալ տարվայ այնքան հապճեպ կերպով ընտրված վարչութեան 15 անդամներից այժմ 4—5 հոգի է միայն մնում, այն էլ երկու ոտքով սկսել է կաղալ:

Պէտք է ասել, որ ընդհանրապէս մեզանում ընտրվողները, շատ քիչ բացառութեամբ, ի չարն են գործ դնում ընտրողների հաւատը. որքան մեղաւոր է ընտրողը, որ իր քուէն տալիս է անգիտակցաբար և կամ բարեկամաբար այնպիսիներին, որոնք ընտրվում են միմիայն ընտրված լինելու համար, աւելի դատապարտելի է այն մարդը, որ գիտենալով հանդերձ ստանձնելիք պաշտօնում իր անկարող և անընդունակ լինելը՝ այնուամենայնիւ ընտրվում է և տարեկան կամ մի քանի անգամ մասնակցում և կամ բոլորովին հեռանում գործից:

Ժողովրդական համալսարանի ընկերութիւնը գոնէ, որի վսեմ նպատակն է ժողովրդի մութ խաւերում գիտութիւնը մատչելի դարձնելը, պիտի զերծ լինի նման ընտրելիներից, ժողովրդի գործին նուիրվելու հնարաւորութիւն չունեցողներից... Այս կարևոր հանգամանքը չը պէտք է աչքաթող անեն ինչպէս ընտրողները, նոյնպէս և ընտրվողները:

Բ. Մ.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Մայիսի 16-ին, Թիֆլիսի նահանգական դատարանի 2-րդ քրէական բաժնում քննվեց Թիֆլիսի բնակիչներ՝ Կօզ. Ալիխանովի, Միխ. Մպատարովի, Ալր. Խաչիէվի և Գ. Մուրադովի գործը, որոնք մեղադրվում են ռումբեր պահելու մէջ: Պաշտպանում էր երդ.-հաւ. Ծուրկէվիչը: Նահանգական դատարանը երկու ժամվայ խորհրդակցութիւնից յետոյ բոլոր մեղադրեալներին արդարացրեց:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Շուշի, 14 մայիսի

Ամսիս 11-ին, կիրակի օրը երեկոյեան, Շուշու հոգևոր դպրոցի դահլիճում, ձայնագրութեան ուսուցիչ պ. Ռուբէն Մանասեանը, մասնակցութեամբ նուագածուհի Ս. Ի. Դոբրօսելսկու, յօգուտ նոյն դպրոցի աղքատ աշակերտների՝ մի համերգ տուեց: Խումբը կազմված էր 80 աշակերտներից:

Համերգը կազմված էր երեք բաժանմունքից և քսանհինգ երգերից թէ քառաձայն, թէ սօլօ և թէ դաշնամուրի վրա նուագելու համար: Քառաձայն խումբը բաւական աջող երգեց Կոմիտաս վարդապետի ներդաշնակած «Սարի վրով», «Երի-երի ջան», «Մեզ նոր արև», «Ալագեազ», «Մեր դրանը», «Սօնա-եար», «Անձրևն եկաւ», յետոյ Կարա-Մուրզայի «Նոր-Մօզայի խմբերգը», «Ջան գիւլում» և Գ. Միրզայեանի «Ինջիլիկ» երգերը:

Համեմատաբար թոյլ երգեցին Կոմիտաս վարդապետի «Հիմի էլ լռենք», «Ոհ ինչ խմբերգ» և «Հոյ ջանում» երգերը: Բայց չը նայելով դրան, պէտք է ասած, որ համերգը բաւարար տպաւորութիւն թողեց:

Եղանակի վատութեան պատճառով հասարակութիւն քիչ կար: Վերջում տեղի ունեցան եւրոպական և ասիական պարեր: Զուտ արդիւնքը մի հարիւր րուբլուց չի անցնի:

Լ. Յովսէփեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մեզ հաղորդում են, որ ամսիս վերջին Թիֆլիս է գալու պրօֆ. Մառը:

◆ Թիֆլիսի ժամ. գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ, Թիֆլիսում բանտարկված 1) Նախիջևանի գաւ. Կաղնուտ գիւղի բնակիչ Եղիա Մուղդուսի Բաղունեան (Մուսայէլեան), 2) Կատար գիւղացի Մակար Մուրադեան, 3) ալէքսանդրապօլցի Կարապետ Աղամեան, 4) պարսկահպատակ Նշան Խալաթեան, 5) Թիֆլիսեցի Մակար Տէր-Ավդօէվ, 6) Բարանա գիւղացի Մկրտիչ Ամիրաղեան, 7) Սեդրակ Զարմաղեան, 8) պարսկահպ. Տ. Ալէքսանդրեան, 9) Յովհ. Փարսադանեան, 10) Թիւրքահպատակ Սարգիս Յարութիւնեան, 11) Նոր-բայազէտցի Մարտիրոս Մարտիրոսեան, 12) պարսկահպ. Մանուկ Խալաթեան, 13) Թիւրքահպ. Յակոբ Մանուկեան, 14) գանձակեցի Գրիգոր Բօղդանեան, 15) պարսկահպ. Մանուկ Խաչատրեան, 16) Միսակ Մաթէոսեան, 17) Խաչ. Ղազարեան, 18) Յովսէփ Յարութիւնեան, 19) Արմենակ Օզանէսօվ, 20) Կ. Տէր-Յակոբեան, 21) Մաշադի Բաբաօղլի, 22) Աբբաս Իւսուպօվ, 1905 թ. դեկ. 18-ի պարտադիր կանոնները խախտելու և ապօրէնի ժողով գումարելու համար, ենթարկված են իւրաքանչիւրը երեք ամսով բանտարկութեան, հաշվելով նախնական բանտարկութեան օրից:

◆ «Кавказъ» պաշտօնական թերթում տպված է հետևեալ հերքումը. «Յայտարարութիւն Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի դիւանատնից: „Терекъ“ լրագիրը, № 101-ում, այս տարվայ մայիսի 4-ից, հաղորդելով որ Պետական Դումայի աջակողմեան անդամների ֆրակցիան լրացուցիչ հարցապնդում է անելու կովկասեան գործերի մասին, աւելացնում է, «Россія» լրագրի խօսքերը վեր առնելով, որ յիշեալ հարցապնդման մէջ մտադրութիւն կայ յիշելու ի միջի այլոց, թէ «Կովկասի գաղթականներին նպաստ տալը լինում է անկանոն կերպով, և մինչ ռուս գաղթականները կամ համարեա չեն օգտվում պետական գանձատան նպաստներից, կամ օգտվում են շատ քիչ, հայ գաղթականները ահագին քանակութեամբ նպաստ են ստանում»:

«Այս տեղեկութեան առիթով, Կովկասի Փոխարքայի դիւանատունը անհրաժեշտ է գտնում հաղորդել, որ ոչ մի դրամական փոխատուութիւն, ինչպէս և գաղթային վարչութեան գումարներից ոչ մի նպաստ հայ գաղթականներին երբեք չէ տրված, որովհետև գոյութիւն ունեցող օրէնսդրութիւններով այդպիսի գաղթականներին նպաստ կամ փոխատուութիւն չի թոյլատրվում տալ, դեռ մի կողմ թողած այն հանգամանքը, որ երկրումս հայ գաղթականներ բոլորովին չը կան»:

◆ Թիֆլիսի ոստիկանապետը կարգադրել է պրիստաւներին ոստիկանատներում պահվող բանտարկեալների մօտ ոչինչ թողնել, որպէսզի նրանք չը կարողանան որևէ կերպ իրանց վնասել: Ջուրը պէտք է տալ մետաղէ բաժակներով:

◆ Թիֆլիսի ոստիկանապետը առաջարկել է պրիստաւներին շրջել բոլոր առևտրաարդիւնաբերական հաստատութիւնները և տեսնել՝ ունե՞ն բոլորը կշեռքներ և սրանց վերաբերեալ բոլոր պարագաները:

◆ Մայիսի 16-ին, ի պատիւ Թիֆլիս եկած գեն. Զարուբաէվի, պալատում ճաշ տրվեց, որին ներկայ էին նաև շատ բարձրաստիճան զինուորականներ:

◆ Կովկասի Փոխարքայի քաղաքացիական մասի օգնական սենատոր Միցկէվիչը մայիսի 17-ին վերադարձաւ Բագու և Գանձակ կատարած ճանապարհորդութիւնից:

◆ Կովկասի Փոխարքայի խորհրդի անդամ Զուսկօվսկին մայիսի 16-ին վերադարձաւ Բագուից:

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը վերջնականապէս կանգ է առել քաղաքային ինժեներ Կօզնովսկու նախագծի վրա, որի համաձայն քաղաքիս էլեքտրաքարշի բոլոր գծերի վրա պէտք է երթևեկեն ընդամենը 88 վագոններ:

◆ Վաղը, մայիսի 21-ին, նշանակված է քաղաքային դումայական բալնէօլօգիական մասնաժողովի նիստը:

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան զինուորական սեղանի հաշւետուութիւնից երևում է, որ 1908 թւի նորակոչ զինուորների ցուցակում մտցված են 521 երիտասարդների անունները, որոնցից 155-ը զանազան արտօնութիւններ ունեն: Տեղացիների թիւը 321 է. ըստ կրօնի նորակոչները բաժանվում են՝ 492 քրիստոնեաներ, 13 հրէաներ, 3 մահմէդականներ և 13 այլադաւաններ:

◆ Մայիսի 17-ին, ցերեկվայ ժամը 12 1/2-ին, չորս զինված անձինք ներս խուժեցին Ելիզավետինսկի փողոցում գտնվող պօստային բաժանմունքը և, մահվան սպառնալիքով, պաշտօնեայից յափշտակեցին 2000 րուբլու ծրարներ ոչ ոք ձերբակալված չէ:

◆ Թիֆլիսի արհեստական ընկերութեան նոր թատրոնը, որ աւարտվեց ամառային շինութեան մէջ, նստեց 20000 րուբլի:

◆ Թիֆլիսի նահանգապետը մայիսի 17-ին աւտոմօբիլով գնաց Կօջոր:

◆ Տպարանատէր Գիւտ ա. ք. Աղանեանը, պարտադիր որոշումները խախտելու համար, Թիֆլիսի ժամ. գեն.-նահանգապետից ենթարկվել է 100 րուբլի տուգանքի:

◆ Գանձակում, պարսից փոխ-հիւպատոսարանի կառավարիչ Հաջի-Կուլի-խանի նախաձեռնութեամբ, բացվելու է ձրի դպրոց պարսիկ երեխաների համար:

◆ Գանձակի գաւառում երևացել է յայտնի փախստական Նաղիի աւազակախումբը: Մայիսի 15-ին աւազակախմբին հետապնդելու համար մեկնել է գաւառապետ Տաուբէվը մի հարիւրեակ կօզակներով:

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Կանանց բարեգործական ընկերութեան վարչութիւնը հաղորդում է քաղաքային վարչութեանը, որ ս. Նինայի դպրոցի գիշերօթիկ աշակերտուհիների ուսման և պահելու թօշակը առաջիկայ սեպտեմբերից, վարչութեան որոշմամբ, աւելացված է մինչև 350 րուբլի տարեկան:

◆ Տղայոց գիմնազիայի աշակերտների զտումը շարունակվում է: Սկզբում, ինչպէս յայտնի է, թոյլ չը տուին վերջնական քննութիւն տալու ութերորդ դասարանի 35 աշակերտներին: Յետոյ մանկավարժական խորհուրդը ձևական հիմունքների վրա թոյլ չը տուեց փոխադրական քննութիւն տալու V, VI և VII դասարանների աշակերտներից շատերին: Այժմ էլ շրջանի հոգաբարձուն ծանօթանալով յիշեալ աշակերտների քառամեակի թւանշանների ու վարքի հետ, աւելացրեց 39 հոգի էլ: Մի խօսքով խստութիւնները թափվում են ամեն կողմից: Շատ ցաւալի է, որ իր ժամանակին միջոցներ ձեռք չառնվեցին այդպիսի տխուր երևոյթի առաջն առնելու համար, որը ներկայումս առիթ է տալիս ռեպրեսիվ միջոցների:

◆ Մայիսի 17-ին Բագուի վրայով Պարսկաստան է անցել 10 հոգուց բաղկացած Լօձի գործարանատէրերի մի խումբ, որը նպատակ է դրել ծանօթանալ անտեղի մետաքսեղէն ապրանքների հետ: Ինչպէս ասում են, այդ ապրանքները իրանց յատկութեամբ չինական և ճապօնական մետաքսեղէն գործուածքներից բարձր են համարվում:

◆ Սպիտակ քաղաքում մայիսի 16-ին գործադուլ են արել Բէյլօվի գործարանի բանուորները թւով 70 հոգի, առաջադրելով տնտեսական պահանջներ:

◆ Երեկոյեանները լոյս տեսնող «Сегодня» լրագրի խմբագիր-հրատարակիչ Լ. Դ. Միրզայեանցը խնդրամատոյց է եղել քաղաքագլխին՝ թոյլատրելու իր թերթի բաժանորդագինը տարեկան 7 րուբլի դարձնելու: («Б.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Մայիսի 11—12-ը, երկու օրվայ ընթացքում, Պետերբուրգում, «Б. В.» լրագրի ասելով, տեղի են ունեցել 18 անձնասպանութեան դէպքեր, որոնցից 10 հոգի վախճանվել են: Դրանցից 12-ը անչափահասներ են եղել: Ատրճանակի գնդակով վերջ է տուել իր կեանքին Պետերբուրգի համալսարանի ուսանող Լապպա: Պատճառն անյայտ է:

◆ «Ռուս ժողովրդի միութեան» գլխաւոր խորհուրդը տեղեկացրել է ճանապարհների հաղորդակցութեան մինիստր ֆօն-Վինդրիխին, որ միութիւնը պատրաստ է դնել գեներալի տրամադրութեան ներքոյ երկաթուղային ծառայութեան համար «իր» անդամներից 112,000 հոգի, որոնք համապատասխանում են ոչ միայն իրանց քաղաքական տեսակէտից, այլ և գործնական՝ երկաթուղային շահերի տեսակէտից:

◆ Յունիսին Պետերբուրգ է վերադառնալու Թէհրանի դեսպան Հարդվիգը, որը, ինչպէս ասում են, այլևս չի վերադառնայ իր պաշտօնին: («Р»)

◆ Մեծ աղմուկ է յարուցել «Нижег. Листокъ» թերթի արած մերկացումները Սարմովի գործարանի մէջ կատարված գողութիւնների մասին—անպէտք շրապնելները պիտանի դարձնելու առիթով: («Р. В.»)

◆ Պետական Խորհրդի շրջաններում լուրջ ուշադրութիւն են դարձրել յայտնի միլիօնատէր Կրեստօվնիկօվի յայտարարութեան վրա, որ արել է նա ամուրեան և ֆինանսական մասնաժողովների նիստերից մէկում՝ թէ առանձին յոյս չը պէտք է դնել ներքին փոխառութեան վրա: Որովհետև Կրեստօվնիկօվը կապիտալի աչքի ընկնող ներկայացուցիչներից մէկն է, ուստի նրա յայտարարութիւնը, համարեա, պաշտօնական բնաւորութիւն է կրում կապիտալիստների կողմից: («Р. Сл.»)

ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ

VIII *)

Անցեալ անգամ հաղորդել էինք, որ Թիֆլիսում մայիսի 3-ին փակվեց վրաց օրիորդաց Կազբեկի անունով ուսումնարանը: Փակվեց, որովհետև երեխաները ուսում էին առնում իրանց մայրենի լեզուով, իսկ ուսումնարանների շրջանային հոգաբարձուն պահանջում էր, որ ուսուցման լեզուն լինի ռուսերէն:

Վրաց մամուլը զբաղված է այդ հարցով: «Ամիրան» թերթը արձանագրելով փաստը իր 57 և 61 համարների առաջնորդող յօդուածներում, աւելացնում է, որ ժողովուրդը անտարբեր է, բթացել է շատերի ինքնուրոյնութեան զգացումը... որ վրացի հասարակութեան հոգեբանութիւնը տարված է օտարանալուն, աւելի կոնկրէտ ասելով՝ ռուսանում է վրացի ժողովուրդը...

«Այդ պատճառով այդ տեսակ որևէ կարգադրութիւն խորթ չէ թւում նրան, փշի նման չէ խոցում նրա սիրտը... Շատ ժամանակ չէ անցել, հէնց մեր փոքր հասակում, ծնողները իրանց երեխանց օրօրոցի մօտ դգուանքով ասում էին. «Որդեակ, եթէ ուզում ես մարդ դառնալ, ռուսերէն սովորիր»: Վրացի արիստոկրատիան (իշխանութիւն, ազնուական դասակարգը) և վրացի ինտելիգենցիան էլ չէ կարողանում, նրան էլ չէ յարմարվում խօսել վրացերէն... Մեր ժամանակի տգէտները և անհասկացող ուսում առածները ուսումը, գիտութիւնը, կրթութիւնն ու ընդհանուր կուլտուրան խուրդա են արել ռուսերէն խօսելու կարողութեան վրա: Այժմ ընդհանրապէս որևէ մէկի զարգացողութեան բարօմետրը համարվում է այն, թէ որչափ մաքուր, ազատ ռուսերէն է խօսում... Երբ իրողութիւնն այսպէս է, ապա էլ ինչո՞ւ և կամ ինչ իրաւունքով ցաւենք և յուզվենք այնպիսի մի ուսումնարանի փակվելով, որտեղ փոքրիկ երեխաները մայրենի լեզուով էին ուսանում և ոչ թէ ռուս լեզուով»:

Այսպէս մի շարք տեղին և իրաւացի նախատինքներ է թափում յօդուածագիրը վրացի բարձր դասակարգի և ինտելիգենցիայի գլխին: Մինչև այժմ դպրոցը համարվում էր ուսեալներին, ազնուականներին և տէրերին մատչելի և դրանք են առաջ բերել այն սերունդը, որը ուսում է առել «դիպլօմի համար և չինովնիկ դառնալու», բայց դրանք չեն, որ վրացի հասարակութեան հիմք կազմեն, դրանք չեն, որ իրանցից վրաց ազգ ներկայացնէին, այլ այն սերունդը, որ առաջ է գալիս վրացի բուն ժողովրդից—գիւղացիութիւնից, որը արդէն զգացել է ուսման քաղցրութիւնն ու կարևորութիւնը. և ահա դրանց վրա է դնում յօդուածագիրը իր յոյսը. «Վրացի աշխատող ժողովուրդը չի մեռնի, չի մեռնի և վրացի հասարակութիւնը և վրացի կուլտուրան: Ծովի քամին երբեմն վերևից է փչում, երբեմն ներքևից: Ծովի ալիքը երբեմն դէպի աջ է դարձվում, երբեմն դէպի ձախ, բայց և այնպէս ծովը մնում է էլի ծով»: Վրաց առաջադէմ թերթը դատապարտելով այդ տեսակ անտարբերութիւնը, բողոքում է այդ օտարացման քաղաքականութեան դէմ և ասում է, որ «չենք կարող հաշտվել այդ տեսակ կարգադրութեան հետ»: Բայց բողոքը կարծես մենակ է մնում, կարծես նա արձագանք չէ գտնում և կարծես որոշ չափով հաշտվում է դրութեան հետ և ուրիշ միջոցներ է որոնում—առաջարկում նպատակին—մայրենի կրթութեանը հասնելու. «Ի հարկէ դրանով (բողոքով) չենք ուզում ասել, որ կառավարութեան փակած ուսումնարանը մենք համարենք բաց և կամ նրանց գոցած ու կղպած դուռը ուժով կոտրենք, այլ ուսումը դպրոցից փոխադրենք մեր ընտանիքը»: Առաջարկում է առանց ուսումնարանների՝ մայրենի լեզուի, պատմութեան և գրականութեան ուսումը տարածել ընտանեկան շրջաններում մասնաւոր ջոկերով, ամեն մարդ իր շրջանում հաւաքելով թէ երեխանց և թէ հասակաւորներին: Դա որքան ուղիղ է և գովելի, նոյնչափ և դատապարտելի. պէտք է միշտ ձգտել ձեռք բերելու նպատակին հասնելու ուղիղ ճանապարհը. լրագրի առաջարկածը այս դէպքում անուղիղ ճանապարհ է: Լինում են մոմենտներ, պատմական ժամանակներ, երբ ամեն մի կօմպրօմիս անընդունելի է:

Ս. սարկ.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

◆ Ֆինլանդիայի հարցի առիթով օպօզիցիայի կողմից անցողական բանաձև չառաջարկելու փաստը բացատրվում է նրանով, որ դեռևս մայիսի 11-ին օպպօզիցիան նախապատրաստական մի ժողովում որոշած է եղել այդպիսի բանաձև չառաջարկել: Այդ որոշումը նա արել է այն դիտումներով, որ այդ տեսակ մի բանաձև, ուր վճռական կերպով մատնանշված պիտի լինի թէ Ֆինլանդիայի սահմանադրական իրաւունքները չը պէտք է խախտվեն, Դումայի մէջ մեծամասնութիւն չէր ստանայ, իսկ այդ հանգամանքը չափազանց ծանր կերպով կարող էր ազդել ֆինլանդացիների վրա: («Р. Ут.»)

◆ Լուր է պտտում, որ մօտ օրերս Եալտայում կառավարչական վերաքննութիւն է նշանակվելու: Պատգամաւորները համոզված են, որ առանց այդպիսի վերաքննութեան իրերի դրութիւնը Եալտայում չի բարեփոխվի: Ի միջի այլոց, պատգամաւորներից շատերը նամակներ են ստանում Եալտայից, որտեղից գրում են, որ տեղական սօյուզնիկները ամեն տեսակ սպառնալիքներով ստիպում են այն անձանց, որոնք գեներալ Դումբաձէի հարցապնդման մէջ յիշված են, հրաժարվել ցուցմունքներից: Այդպիսով գլխաւոր տեղը տրվում է տեղական ոստիկանութեան պաշտօնեաների ցուցմունքներին:

◆ Պատգամաւոր Լիւբեն հաղորդել է «Б. В.» լրագրին, որ, նրա կարծիքով, պետական բիւջէի լիակատար քննութիւնը կը վերջանայ մինչև յունիսի 7-ը: Իրան յայտնի է, որ Պետական Խորհուրդը կուշացնի Դումային ոչ աւելի քան մի շաբաթ: Մի քանի օր էլ կը զբաղեցնեն զանազան մանր օրինագծերը, իսկ այնուհետև պէտք է սպասել, որ Պետական Դումայի անդամ-

---

*) Տես «Մշակ» № 102

ները կարող են ցրւել իրանց տները մօտաւորապէս յունիսի 20-ին:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Նիստ մայիսի 16-ի

Նիստը բանում է Խոմեակովը: Կարդացւում է օրակարգը: Մինիստրների օթեակում է արդարադատութեան մինիստրը:

Հերթում դրված է Դումայի անդամ Կօսօրոտովին հեռացնելու յայտարարութիւնը:

Մակլակովը ընդգծում է, որ օրէնքի պարզ չը լինելու պատճառով, տարբեր հասկացողութիւն գոյութիւն ունի այն սկզբունքային հարցի վերաբերութեամբ, թէ, արդեօք, Դուման իր իրաւասութեան սահմաններում իրաւունք ունի հեռացնելու իր անդամներին թէ ոչ: Նախ պէտք է լուծել այդ սկզբունքային հարցը, ապա, սկզբունքային հարցի լուծման հետ յարակից, վճռել կօնկրէտ դէպքերը: Անհրաժեշտ տարբերութիւն կայ,—հեռացված լինել ձեւական պատճառներով թէ ըստ էութեան գործի, և վիճաբանութիւնների ժամանակ էլ չէ կարելի չը զատել գործի էութեան և ձեւական շուրջը պտտող վիճաբանութիւնները: Վերջապէս, Դումայի իւրաքանչիւր անդամի համար անհրաժեշտ է գիտենալ՝ պարտաւոր է նա օրէնքով ձայն տալ հեռացնելու համար թէ ոչ: Ուստի և անհրաժեշտ է ամենից առաջ լուծել սկզբունքային հարցը, իսկ յետոյ արդէն անցնել Կօսօրոտովի գործին:

Բարօն Մէյէնդօրֆը մատնանշում է, որ սկզբունքային հարցերը Դուման վճռում է իբրև հերթական գործերին անցնելու բանաձեւեր. գուցէ ներկայ դէպքում էլ Դուման այդ կերպ իր կարծիքը կը յայտնէ սկզբունքային հարցի մասին, բայց ոչ մասնաժողովը, ոչ էլ նրա զեկուցանողը չը պէտք է իրանց վրա նախաձեռնութիւն վերցնեն ստեղծելու այսպիսի բանաձեւ—«Դումայից է կախված այդ գործի քննութեան կարգը»:

Բուլատը կողմնակից է հարցը զատելու կարծիքին:

Աջէմեանը մատնանիշ է անում, որ առանց սկզբունքային հարցի լուծման չէ կարելի կանոնաւոր ձայնատւութիւն ստանալ Կօսօրոտովի կօնկրէտ դէպքի վերաբերութեամբ, որովհետև ոմանք ձայն կը տան յօգուտ Կօսօրոտովին հեռացնելու ըստ էութեան, միւսները՝ նոյնպէս յօգուտ նրա հեռացման, սակայն օրէնքի հրամանը մեքենայաբար կատարելու անհրաժեշտութիւնը նկատի առնելով: Այդպիսի խառն ձայնատւութիւնը կանոնաւոր չի ճանաչվի: Բացի դրանից, կօնկրէտ դէպքի այդօրինակ լուծումը կանխօրէն կը վճռէ սկզբունքային հարցի լուծումը:

Շուբինսկին ասում է, որ հոկտ. 17-ի միութեան ֆրակցիան իր մեծամասնութեամբ, չը խուսափելով սկզբունքային հարցի լուծումից, ներկայ դէպքում կողմնակից է Կօսօրոտովի գործի անմիջական լուծման: Կօսօրոտովի գործի նկատմամբ մասնաժողովի կայացրած որոշումը հիմնված է երկու վճիռների վրա—իրաւաբանական և ըստ էութեան:

Զամբրցովսկին յայտնում է, որ աջակողմեանների ֆրակցիան ձայն կը տայ յօգուտ Կօսօրոտովի՝ գործը անմիջապէս քննելու:

Մակլակովը ասում է, որ Դումայի անդամներին հեռացնելու հարցը ապագայում էլ կը կրկնվի. անհրաժեշտ է մէկ անգամ ընդ միշտ լուծել դումայական իրաւունքների հարցը: «Դումայի իրաւունքների հարցը պէտք է լուծել անյապաղ. նրանից խուսափել դուք չէք կարող, քանի որ, եթէ հռետորներից իւրաքանչիւրը խօսէ գործի ձեւական կողմից և ըստ էութեան, այն ժամանակ վիճաբանութիւնները վերջ չեն ունենայ»:

Վիճաբանութիւնները սպառված են. նախագահը հարցը դնում է քուէարկութեան. 187 ձայնով (հոկտեմբերեաններ, չափաւոր աջակողմեաններ և աջակողմեաններ) ընդդէմ 128-ի (օպպօզիցիա) վճռվում է չը քննել սկզբունքային հարցը և անցնել Կօսօրոտովի գործի լուծման: («Հ. Գ.»)

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 15 մայիսի

Թիւրիմացութիւնների տեղիք չը տալու համար թոյլ տուէք ուղղել մի փաստացի սխալ, որ մտել էր պ. Ռ.-ի «Մի զբօսանքի առիթով» «Մշակի» № 104-ում տպագրված յօդուածի մէջ:

Մայիսի 12-ին Թիֆլիսի ամառային ժողովարանում տեղի ունեցած զբօսանքը դպրոցիս վարչութիւնը կազմակերպել էր ոչ թէ այն յոյսով, որ զբօսանքից մնացած եկամուտով «վճարէր ապրիլ, մայիս, յունիս, յուլիս և օգոստոս ամիսների 7 դասատուների ռոճիկը», ինչպէս գրել է պ. Ռ., այլ որպէսզի ծածկվի դպրոցի նախահաշւի այն [illegible], որ առաջացաւ այս տարի շնորհիւ այն հանգամանքի, որ վարչութիւնս, տեսնելով իր սաներից շատերի չքաւոր դրութեան մէջ, բացի որոշված 30 հոգուց, տարվայ ընթացքում ուսման վարձից ազատեց դարձեալ 35 վերին աստիճանի աղքատ աշակերտուհիների: Բայց, ինչպէս շատ ճիշտ կերպով պ. Ռ.-ն նկատել էր, ոչ Բաժօյենց և ոչ էլ ս. Նշանի եկեղեցու հարուստ ծխականները չէին բարեհաճել գոնէ իրանց ներկայութեամբ օգնութեան գալ հէնց իրանց դպրոցի աղքատ սաներին, և այցելուների մեծ մասը դարձեալ դպրոցիս աշակերտուհիների աղքատ ծնողներն էին, որոնք, ի հարկէ, չէին կարող զբօսանքին այնքան արդիւնք տալ, որպէսզի ծախքերը դուրս գալուց յետոյ մի գումար մնար յօգուտ զբօսանքի նպատակների:

Ուսուցիչ՝ Գ. Վարդանեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱ

Սուֆրաժիստուհիները, որոնք վերջին ժամանակներս ամեն կերպ աշխատում էին խանգարել Անգլիայի բոլոր մասերում տեղի ունեցող ազատամիտների միտինգները, ստիպված եղան այժմ էլ իրանց վրա կրելու այդ տեսակ բռնութիւնների ամբողջ բաւականութիւնը:

Մօտ ժամանակներս Կարդիֆում նրանք մտածեցին բողոքի միտինգ գումարել Չերչիլի ընտրութեան դէմ: Նրանց համախոհների հետ միասին միտինգ եկան նաև մօտ 150 հակասուֆրաժիստուհիներ, զինված նոյնատեսակ զանգակներով, որոնցով սովորաբար միտինգ են գալիս իրանք սուֆրաժիստուհիները:

Հէնց որ միտինգ գումարողները սկսում են խօսել, հակասուֆրաժիստուհիները այնպիսի զանգահարութիւն են սկսում, որ կատաղած սուֆրաժիստուհիները նրանց վրա են յարձակվում բռունցքներով:

«M. Post» լրագրի ասելով տեղի է ունեցել մի այնպիսի վայրենի տուր ու դմփոց, որի ժամանակ փառաւոր կերպով ջարդ կերած սուֆրաժիստուհիները փախուստ են տուել, իսկ նրանց հակառակորդները պատառ-պատառ են արել սուֆրաժիստուհիների ամբողջ գրականութիւնը և նրանց բոլոր դրօշակները:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

17 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Երէկ, ցերեկով, հասարակական գործիչների կլուբում մի խորհրդակցութիւն կայացաւ սլաւոն հիւրերի հետ՝ սլաւոնական ժողովուրդների միջև տնտեսա-կուլտուրական մերձեցումը զարգացնելու և ամրապնդելու նպատակով: Առաջարկվեցին շատ միջոցներ, ի միջի այլոց—հաստատել սլաւոնական բանկ, ուղարկել ռուս գիւղացիներին անհամեմատ կուլտուրական երկիրները՝ երկրագործութեան այժմեան պայմանների հետ ծանօթանալու համար, հաստատել Պրագայում ռուսական առևտրական հիւպատոսարան, հիմնել սլաւոնական մամուլի բիւրօ, տարածել Ռուսաստանում մարզարաններ, շփումն առաջ բերել սլաւոն երիտասարդութեան մէջ, հաստատել համասլաւոնական ցուցահանդէս և այլն: Մասնակցում էին մօտ 300 հոգի, որոնց թւում Պետական Դումայի և խորհրդի անդամներից շատերը, Խոմեակովը, նշանաւոր հասարակական գործիչներ, հասարակական կազմակերպութիւնների, սլաւոն հասարակութեան ներկայացուցիչները, քաղաքային դումայի և Պետերբուրգի զեմստվօյի ձայնաւորները, խոշոր արդիւնաբերութեան, գեղարուեստի և գիտութեան, ռուսաց և օտարազգի մամուլի ներկայացուցիչները: Առաջին կենացը առաջարկվեց Թագաւոր Կայսրի, երկրորդը՝ Ֆրանց Յովսէփի համար. օդը թնդաց բազմաթիւ ուռաներով: Արտասանվեցին շատ ճառեր: Հիւրերը ցրվեցին ուշ երեկոյեան:

ԿԻԵՎ: Համալսարանի ռեկտոր վերստին ընտրվեց պրօֆէսոր Ցիտովիչը:

ՎԱՐՇԱՎԱ: Պաշտօնական հաղորդագրութիւնից երևում է, որ համալսարանում պարապմունքները կը վերսկսվեն աշնանից:

ՍԼԱՎՅԱՆՍԿ: Հանքային ջրերի վարչութիւնը խնդրում է յայտնել, որ բծաւոր տիֆի մասին երևացած բոլոր լուրերը մտացածին են: Կարգադրիչ Խարիտոնով:

ԱՆԱՊԱ: Սէզօնը բացվեց: Ոչ մի վարակիչ հիւանդութիւն չը կայ: Եղանակը տաք է: Քաղաքագլուխ Պիլէնկօ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Շուտով աջակողմեանները իրանց հարցապնդումը կուղղեն Դումբաձէի մասին Դումայում:

Գեներալ Դումբաձէն ներկայացրեց իր պատճառաբանված զեկուցագիրը ի դէմս աջակողմեանների հարցապնդման: Հարցապնդումների մասնաժողովը, երկու կէտ հանելով այս զեկուցագրի սկզբից, որոշեց զեկուցագիրը յանձնել Դումային:

Մայիսի 16-ին Դումային ներկայացվեց մի նոր օրինագիծ, որով առաջարկվում է մի գումար բաց թողնել կայսրութեան ոստիկանատներին կից խուզարկու բաժիններ հաստատելու համար:

18 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Առաւօտեան Վարշավայի երկաթուղագծով արտասահման մեկնեցին սլաւոնական գործիչները:

Արտաքին

17 մայիսի

ՍՏՕԿՀՕԼՄ: Երկու պալատներն էլ ընդունեցին Նօրվեգիայի հետ համաձայնութիւն կապելու առաջարկը՝ Նօրվեգիայի և Շվեդիայի միջև ծովային սահման որոշելու միջնորդ դատարանով: Առաջին պալատում այդ առիթով բուռն վիճաբանութիւններ եղան: Օրինագիծը ընդունվեց այն ժամանակ, երբ կառավարութիւնը դրեց վստահութեան հարցը:

ԼՈՆԴՈՆ: Թագաւորական զբօսանաւը պատուէր ստացաւ չորեքշաբթի դուրս գալու Պորտ-Սմուտից:

18 մայիսի

ԲԵԼԳՐԱԴ: Ցէտինէից ստացված նորագոյն հեռագիրները հաստատում են, որ Սերբիայի աչքի ընկնող անձնաւորութիւններից ոչ մէկը, հետևաբար և Պաշիչը, մեղսակից չեն ռմբաձիգների գործին:

ՍՏՕԿՀՕԼՄ: Շվէդական թագաւորի Բեռլին այցելելու առիթով լրագիրները ընդարձակ յօդուածներ են զետեղում և մատնանշում են այն սերտ կապը, որ կայ Գերմանիայի և Շվէդիայի միջև:

ԲԵՐԼԻՆ: Մամուլը համակրական յօդուածներ է նուիրում շվէդական թագաւորի այցելութեանը Բեռլին:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԵՐԿԱԹՈՒՂԻ

Գնացքների ամառնային երթևեկութիւն

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը՝ Թիֆլիսի ժամանակով)

	ԱՐԱԳ	ԱՐԱԳԱՑՎԱԾ	ՊՕՍՏԱՅԻՆ	ՄԱՐԴԱՏԱՐ	ԱՊՐ.-ՄԱՐԴԱՏ.
Բագուից դուրս գալը . . .	—	4 ժ. 10 ր. ցեր.	11 ժ. 8 ր. առ.	5 ժ. 24 ր. առ.	—
Թիֆլիս հասնելը	—	8 ժ. 30 ր. առ.	5 ժ. 59 ր. առ.	10 ժ. 52 ր. երեկ.	—
Թիֆլիսից դուրս գալը .	(9 ժ. 3 ր. երեկ.)	—	(7 ժ. 47 ր. առ.)	(12 ժ. 28 ր. գիշ.)	—
Բաթում հասնելը	7 ժ. 14 ր. առ.	—	8 ժ. 40 ր. երեկ.	12 ժ. 36 ր. ցեր.	—
Բաթումից դուրս գալը.	11 ժ. երեկ.	—	7 ժ. 1 ր. առ.	5 ժ. 57 ր. երեկ.	—
Թիֆլիս հասնելը. . . .	9 ժ. 44 ր. առ.	—	8 ժ. 38 ր. երեկ.	7 ժ. 22 ր. առ.	—
Թիֆլիսից դուրս գալը.	—	(11 ժ. 21 ր. գիշ.)	(10 ժ. 36. ր. երեկ)	(8 ժ. 58 ր. առ.)	—
Բագու հասնելը. . .	—	1 ժ. 35 ր. ցեր.	4 ժ. 45 ր. ցեր.	12 ժ. 57 ր. գիշ.	—
Ջուլֆայից դուրս գալը.	—	—	5 ժ. առ.	—	—
Երևանից դուրս գալը .	—	—	—	—	9 ժ. 27 ր. երեկ.
Ալէքսանդրապօլից դուրս գալը.	—	—	7 ժ. 59 ր. երեկ.	—	5 ժ. 30 ր. առ.
Թիֆլիս հասնելը. . . .	—	—	5 ժ. 28 ր. առ.	—	3 ժ. 30 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը. .	—	—	(12 ժ. 53 ր. գիշ.)	—	(11 ժ. 48 ր. առ.)
Ալէքսանդրապօլ հասնելը.	—	—	10 ժ. 21 ր. առ.	—	9 ժ. 53 ր. երեկ.
Ջուլֆա հասնելը. . . .	—	—	11 ժ. 47 ր. գիշ.	—	—
Ալէքսանդրապօլից դուրս գալը.	—	—	10 ժ. 50 ր. առ.	—	10 ժ. 15 ր. երեկ.
Կարս հասնելը.	—	—	2 ժ. 9 ր. ցեր.	—	1 ժ. 49 ր. գիշ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.:
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան:
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան:

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Միխիթարեանց
Մեկնեց կովկասեան հանքային ջրերը և անցեալ տարիների նման ընդունելու է հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլովոդսկում, հիւրանոց «Ռոսսիա»
(ա. օ.) 100—55

Լոյս տեսաւ
„ՆՈՐ ԴՊՐՈՑ"
ամսագրի առաջին համարը
հետեւեալ բովանդակութեամբ

1. Կազմակերպված ուսուցչութիւնը. Արտաշէս Աբեղեան I—VIII
2. «Նոր դպրոց». Իսահակ Յարութիւնեան 3—9
3. Ուսուցչանոցի դերը. Յ. Տէր-Միրաքեան 10—18
4. «Հին» դպրոցի մեղքերից. Սեդրաք Մանուէլեան 19—21
5. Էքսպերիմենտալ (մանկավարժութիւն. Իս. Յարութիւնեան 22—27
6. Պեդօլօգիան (մանկագիտութիւն) կրթական գործում. Տ. Ռաշմաճեան 28—43
7. Հայկական հոլովը աշխարհաբարի մէջ. Ստ. Մալխասեանց 44—51
8. Կովկասահայ դպրոցների ուսուցչական միութիւն. Արտ. Աբեղեան 52—56
9. Տարրական կրթութիւնը Ռուսաստանում. Գ. Ղազարեան. 57—66
10. Մանկական պսիխիկան և մանկավարժութիւն. բժշկապետ Վ. Արծրունի 67—72
11. Քննադատութիւն և գրախօսութիւն. Բրիչ 73—81
12. Քրօնիկօն 82—89
13. Խմբագրութեան պատասխաններ
14. Յայտարարութիւններ

«ՆՈՐ ԴՊՐՈՑԻ» բաժանորդագրութեան պայմանները

Բաժնեվճարն է՝	Տարեկան	կէս տարին
Միութեան անդամների համար	3 րուբ.	2 րուբ.
Ոչ անդամների համար	5 »	3 »

Առանձին համարները—50 կոպ.

Բաժանորդագրութեան տարին հոկտեմբերից հոկտեմբեր է: Այժմ բաժանորդագրութիւն ընդունվում է ապրիլից մինչև սեպտեմբեր:

Խմբագրութեան հասցէն է՝ Тифлисъ, Редакція журнала «Норъ Дпроцъ», Бебутовская № 30. Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor Dprotz»:

Պատասխանատու խմբագիր՝
Իս. Յարութիւնեան
2—2
(կ. ե.)

Լոյս տեսաւ
ՆՈՐ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ
ՎԷՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՈՂԲ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ
պատմական վէպը, 304 մեծադիր եր.
ԳԻՆՆ Է 50 Կ.
կազմած արժէ 85 կ., 1 ր. և աւելի:
Դիմել՝ Тифлисъ, книжн. магазинъ „Гуттенбергъ", Г. И. Галустяну.
(շ. ե. հ.) 3—2

ՄԱՆԹԱՇԵԱՆ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ
Հիմնված Թիֆլիսի առեւտր. ընկերութիւնից

Պատրաստական (հանրակրթական) դասարանում ընդունվում են առանց քննութեան այն տղաները, որոնք կը ներկայացնեն վկայական իրանց դասընթացքն աւարտելու մասին միդասեանից ոչ ստորին, իսկ առաջին դասարան ընդունվում են երկդասեան քաղաքային կամ գիւղական դպրոցներում աւարտածները. կամ թէ համապատասխան քննութիւն տուողները:

Ընդունելութեան քննութիւնները լինելու են յունիսի 3-ին և 4-ին, առ. 9 ժամից:

Ուսման վճարն է 15 ր. կիսամեակի համար: Խնդիրներ ընդունելութիւնը և տեղեկութիւնների տալը տեղի են ունենում ամեն օր Թիֆլիսի առևտրական դպրոցի դիւանատանը, ցերեկվայ 9 ժամից մինչև 1 ժամը և պօստով:

Դպրոցը գտնվում է Թիֆլիսի առևտրական դպրոցի շինութեան մէջ:
(ե. կ.) 6—2

„Գուտտենբերգ"
Գրավաճառանոցում վաճառվում են ԼԷՕԻ հետևեալ աշխատութիւնները.
«Հայկական տպագրութիւն», առաջին հատոր, երկրորդ տպագրութիւն, 1904, 1 ր. 20 կոպ.:
«Յովսէփ կաթողիկոս Արղութեան», 1902, 60 կոպէկ:
«Գրիգոր Արծրունի», առաջին հ. 1902
«Գրիգոր Արծրունի», երկրորդ հ. 1903 4 ր.
«Գրիգոր Արծրունի», երրորդ հ. 1905
«Ս. Մեսրոպ», 1904, 75 կ.:
«Ռուսահայ գրականութիւն», Վենետիկ, 1904, 1 ր. 50 կ.:
«Մելիքի Աղջիկը», վէպ, երկրորդ տպագրութիւն, 1905, 1 ր. 50 կ.:
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ Гуттенбергъ Г. И. Галустяну:
5—2

Ալէքս. ուսուցչ. ինստիտուտի
ՍԱՆ
լաւ պրակտիկայով ամառ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է դասեր ունենալ ամարանոցում. 6-դ քաղաքամաս, Խարփուխի հիւ., Воронцовская ул., № 47. Հարցնել Ա. Պօկուլին, ցերեկ. ժամը 8—12.
(օ. մ.) 3—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինովսկայա փողոց № 8.
(ե. հ. շ.) 100—67

ԲԺՇԿԱՊԵՏ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻՆ
մեկնեց Պեատիգորսկ (Կովկ. հանք. ջրերը):
Հասցէն՝ Верхній бульваръ д. кн. Гирей.
10—7

Լոյս տեսաւ
Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Դիմել հեղինակին՝ Эчміадзинъ, Іоаннесу Іоаннисіану.
(օ.մ.) 10—6

ԱԴՕԼՖ ՌՈՒԴԷ
Ժողովրդական դպրոցի
ՄԵԹՕԴԻԿԱ
Փոխադրեց գերմաներէնից
Յովհաննէս Տէր-Միրաքեան
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Ներածութիւն. Պատմութեան նախաշաւիղների ուսուցումը. Պատմութեան ուսուցումը. Աշխարհագրութեան ուսուցումը. Բնագիտութեան ուսուցումը. Հայոց լեզուի ուսուցումը. Թւաբանութեան ուսուցումը. Երկրաչափութեան ուսուցումը. [illegible] աշխատութիւններ
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Կազմված՝ 1 ր. 90 կ.
Դիմել, Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ". Г. И. Галустяну.
Գրախանութի ցուցակը ցանկացողներին ուղարկվում է ձրի:
(չ. ու. ե.) 10—6

Պահանջեցէք ամեն տեղ „ՕԴՕԲՐԻՆ"
Միայն ՄԻԽԱՅԻԼ ԼԵԲԵԴԵՎԻ
„Этикетъ утвержденъ прав." մակագրութիւնով

Գլխաւոր պահեստատեղին գեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում:
(10, 20 30) 50—11

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՒԹԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է պ.պ. բաժնետէրերին, որ 1907 թւի դիվիդենտի վճարումը տեղի կունենայ մայիսի 20-ից հետևեալ կարգով.—Փայերը պէտք է ներկայացվեն ընկերութեան գրասենեակը դրոշմելու համար, իսկ փողը կը վճարվի Թիֆլիսի առեւտրական բանկում՝ ամենայն օր ժամը 12-ից մինչև 1-ը:
20, 25 2—1

ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. դեղագործների:—Ռուսաստանում թոյլատրված:
ՄԱՍՏԻԿՕԻ ՍՐՍԿՈՒՄ
—Զգուշացէք կեղծումներից—



Երկարամեայ և բազմաքանակ աջողութիւնները ապահովում են, որ նա կարուկ կերպով գործում է պերելոյի (հօնօրէյ) ժամանակ: Կարճ ժամանակամիջոցում ՄԱՍՏԻԿՕՆ բժշկում է ամենայարատև արտահոսութիւնը:
ՊԱՀԵՍՏԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՒՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ
(15 և 30) 14—12

Типографія „Экономія" Авака Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская ул. № 8.